Regulated by the Central Bank of Armenia License 0025

Վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

Լիցենզիա 0025

Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

19/06/2025թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից

Ուժի մեջ է 14.07.2025թ-ից

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Անահիտ Շաքարյան

# «Ինվիա Ինվեսթմենթս»

# փակ բաժնետիրական ընկերության

# ԲՐՈՔԵՐԱՅԻՆ (ԴԻԼԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

# ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Բովանդակություն

Կանոնների կարգավիճակը ...... 3

1. Տեղեկություններ Ընկերության մասին ...... 3
2. Հիմնական հասկացություններ ...... 4
3. Ընդհանուր դրույթներ ...... 7
4. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը ...... 8
5. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում հաճախորդից պահանջվող տեղեկություններ ...... 9
6. Պրոֆեսիոնալ եվ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների չափանիշները ...... 10
7. Երաշխիքներ և հավաստումներ ...... 12
8. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները ...... 13
9. Հաճախորդի կողմից Պատվերների ներկայացման կարգը ...... 16
10. Գործարքների կնքման և կատարման կարգը ...... 18
11. Ոչ բավարար ծածկույթով գործարքների (մարժինալ առևտրի) իրականացման կարգը ...... 19
12. Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների առանձնահատկությունները ...... 19
13. Միջոցների հաշվառում, պահառուական եվ վերջնահաշվարկի գործառնություններ ...... 20
14. Պատվերների և գործարքների գրանցումը ...... 22
15. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը ...... 23
16. Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու համար ձեռնարկվող քայլերը 24
17. Դիլերային գործառնություններ արժեթղթերով ...... 25
18. Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների գնագոյացման (ձևավորման) սկզբունքները ...... 26
19. Ընկերության և հաճախորդների, ինչպես նաև Ընկերության տարբեր հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը ...... 27
20. Հաճախորդի հետ կապ հաստատելու կարգը ...... 28
21. Կողմերի պատասխանատվություն ...... 29
22. Վեճերի լուծման կարգը ...... 31
23. Պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագրի դադարեցումը, ներառյալ Հաճախորդի՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ ծանուցելու պայմանով ...... 31
24. Հավելվածներ ...... 32
25. Եզրափակիչ դրույթներ ...... 32

## Կանոնների կարգավիճակը

«**Ինվիա Ինվեսթմենթս**» փակ բաժնետիրական ընկերության Բրոքերային (դիլերային) գործունեության կանոնները (այսուհետ՝ «Կանոններ») սահմանում են «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի ֆինանսական գործիքների հետ կապված բրոքերային գործառույթների իրականացման և «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն», «Բրոքեր») կողմից հաճախորդներին բրոքերային և այլ հարակից ծառայություններ մատուցման, ինչպես նաև Ընկերության դիլերային գործունեության կարգն ու պայմանները:

Սույն Կանոնները մշակվել են արժեթղթերի շուկան կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին, Ընկերության կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:

Կանոնները կարգավորում են Ընկերության և Հաճախորդի հարաբերությունները՝ կապված Ընկերության կողմից բրոքերային և այլ ծառայությունների մատուցման հետ: Դրանք կիրառվում են սույն Կանոններին միացած ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ: Շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք միանում են սույն Կանոններին՝ ստորագրելով բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագիրը և ՝ համաձայն սույն Կանոնների Հավելված 11-ի (ֆիզիկական անձանց համար) և Հավելված 12-ի (իրավաբանական անձանց համար): Թույլատրվում է նաև պայմանագրի ստորագրումը այլ ձևաչափով, այդ թվում՝ Բրոքերի գործադիր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևով:

Բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագրը իրավաբանական ուժ է ձեռք բերում Բրոքերի կողմից հաստատման պահից: Հաստատումը կատարվում է ինքաշխատ INVIA հարթակի միջոցով կամ Ընկերության պատասխանատու աշխատակցի միջոցով:

Սույն Կանոնները և Բրոքերի կողմից ընդունված, շահագրգիռ անձի կողմից ստորագրված պայմանագիրը կամ բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագիրը միասին կազմում են այդպիսի շահագրգիռ անձի և Բրոքերի միջև կնքված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր» կամ «Համաձայնագիր»):

Սույն Կանոնները հրապարակային առաջարկ (օֆերտա) չեն հանդիսանում: Ընկերությունն իրավասու է առանց պատճառաբանության մերժել սույն Կանոններին միանալու ցանկություն ունեցող անձի հետ գործարար հարաբերություն հաստատելը: Սույն Կանոնները կարող են ազատ տարածվել ցանկացած շահագրգիռ անձանց շրջանում: Ցանկացած շահագրգիռ անձը իրավունք ունի ծանոթանալ Կանոնների տեքստին ընկերության պաշտոնական կայքի միջոցով www.inviabroker.com.

Եթե շահագրգիռ անձը միանում է Կանոններին INVIA հարթակի միջոցով, ապա նրա նկատմամբ կիրառվում են նաև էլեկտրոնային եղանակով հաճախորդների հաշիվների բացման եվ վարման կարգը, էլեկտրոնային ստորագրությունների օգտագործման եվ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման կարգը կարգավորող կանոնները:

Սույն Կանոններում փոփոխություններ և լրացումներ իրականացվում են Ընկերության կողմից միակողմանի կարգով՝ դրանք կատարելուց հետո հաճախորդին պարտադիր ծանուցմամբ: Պատշաճ ծանուցում է համարվում նաև փոփոխված կանոնների հրապարակումը ընկերության պաշտոնական կայքում:

## 1. Տեղեկություններ Ընկերության մասին

1.1 Ստորև ներկայացվում են Ընկերության մասին տեղեկությունները՝

1) Ամբողջական անվանում՝ «**Ինվիա Ինվեսթմենթս**» **փակ բաժնետիրական ընկերություն**, կրճատ անվանումը՝ «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ:

2) Հասցե՝ ՀՀ, Երևան, 0010, Փավստոս Բուզանդի փ. 15, տարածքներ 24 և 25:

3) էլեկտրոնային հասցեներ՝ info@inviabroker.com, hello@inviabroker.com և trading@inviabroker.com , կայք՝ www. inviabroker.com, հեռախոս՝ +374 10 303 377:

4) Ընկերությունը համատեղում է բրոքերային ծառայությունների մատուցումը օրենքով նախատեսված այլ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ՝ ներդրումային ծառայությունների լիցենզիայի հիման վրա:

5) Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից, որը գտնվում է ք. ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 6, հեռախոս՝ +374 10 592697, կայք՝ www.cba.am , էլ. փոստ՝ mcba@cba.am :

## 2. Հիմնական հասկացություններ

2.1. Ստորև նշված հասկացությունները սույն կանոներում կիրառվում են ստորև նշված իմաստներով.
«**Ընկերություն (Բրոքեր)**» Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ
«**Օրենք**». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
«**Կենտրոնական բանկ**». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
«**Ֆինանսական գործիք**» ՀՀ ֆինանսական շուկայի և/կամ օտարերկրյա ֆինանսական շուկաների Առևտրային հարթակներում ազատ շրջանառվող ցանկացած ֆինանսական գործիք, այդ թվում՝ արժեթղթեր (պարտատոմսեր, բաժնետոմսեր, փայեր, դեպոզիտար ստացականներ և այլն), դրամական շուկայի գործիքներ (մուրհակներ, չեկեր), ածանցյալներ, արժույթ, թանկարժեք մետաղներ և այլն:
«**Սեփական պորտֆել**». Ֆինանսական գործիքների համախումբ, որը պատկանում է և կառավարվում է Ընկերության կողմից որպես մեկ միավոր:
«**Իրացվելիություն**». Ընկերության կարողությունն ապահովելու Հաճախորդների նկատմամբ իր դրամական և այլ պարտավորությունների ժամանակին և ամբողջական կատարումը, Ընկերության սեփական գործառնական հաշվարկների և բաժնետերերի հաշվարկների կատարումը:
«**Պատասխանատու աշխատակից**». Ընկերության կազմում կամ նրա անունից ներդրումային ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնող աշխատակից (Դիլերներ կամ Բրոքերներ):
«**Դիլեր**». Ընկերության աշխատակիցներ, որոնք պատասխանատու են Ընկերության անունից և նրա հաշվին արժեթղթերի առուվաճառքի գործարքներ իրականացնելու համար և ունեն ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին և Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան որակավորում:
«**Դիլերային գործունեություն**». Ընկերության անունից և հաշվին արժեթղթերով գործարքների իրականացում:
«**Բրոքերային գործունեություն**». Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների իրականացում:
«**Լիազորված անձ**». Ընկերության գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը կամ նմանատիպ այլ մարմնի ղեկավարն ու անդամը, Ընկերության կազմում կամ նրա անունից ներդրումային ծառայություններ մատուցելու գործունեություն իրականացնող աշխատողներ:

«**Պարտատոմս**». պարտքային արժեթուղթ, որում թողարկող ընկերությունը կամ կառավարությունը կարող է ներդրողին վճարել որոշակի գումար և որոշակի տոկոսներ ապագայում:
«**Պետական պարտատոմս**». Կանոնների իմաստով ՀՀ և/կամ այլ պետությունների պետական (գանձապետական) և/կամ ՀՀ և/կամ այլ երկրների կենտրոնական բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր:
«**Կորպորատիվ Պարտատոմս**». Կանոնների իմաստով Պետական պարտատոմս չհանդիսացող պարտատոմսեր:
«**Հաճախորդ**». անձ, ով Ընկերության հետ պայմանագիր է կնքել բրոքերային ծառայությունների մատուցման վերաբերյալ:
«**Գնորդ**». Գործարքի օրը Արժեթուղթը գնող անձ:
«**Վաճառող**». Գործարքի օրը Արժեթուղթը վաճառող անձ:
«**Ուղիղ ռեպո**». Հետգնման պարտավորությամբ արժեթղթերի վաճառքի գործարք:
«**Հակադարձ ռեպո**». Արժեթղթերի գնման գործարք՝ վերավաճառելու պարտավորությամբ:
«**Գործարքի կնքման ամսաթիվ**». Աշխատանքային օր, երբ Գործարքն առաջարկող Կողմը մյուս Կողմից ստանում է Գործարքի հաստատում:
«**Գործարքի կատարման ամսաթիվ**». Աշխատանքային օր, երբ Վաճառողի կողմից Գործարքի առարկան պետք է մուտքագրվի Գնորդի արժեթղթերի հաշվին, իսկ միջոցները Գնորդի կողմից պետք է մուտքագրվեն Վաճառողի դրամային հաշվին:
«**Համաձայնագիր**»/«**Պայմանագիր**». Հաճախորդի և Ընկերության միջև կնքվող Բրոքերային հաշվի բացման հայտ-պայմանագիր (հավելված 11, 12), ինչպես նաև բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագիր, և որի անբաժանելի մասն են կազմում սույն Կանոնները. Սակագների մասին կանոնները:
«**Դիլերային պայմանագիր**». Ընկերության և Կողմերի միջև կնքված փաստաթուղթ՝ որպես դիլերային գործունեության մի մաս, որը ներառում է Կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված այս Կողմի արժեթղթերով և դրամական միջոցներով Գործարքի կնքման և կատարման հետ:
«**Պատվեր**»/«**Հանձնարարական**». Հաճախորդից/գործընկերոջից՝ արժույթով/արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով ներկայացված հանձնարարական, Կողմերից մեկի կողմից մյուս Կողմին Գործարքի գրավոր առաջարկ՝ Դիլերի և/կամ Բրոքերի կողմից կնքված գործարքների վերաբերյալ:
«**Աշխատանքային օր**». ցանկացած օրացուցային օր, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոների և հիշատակի օրերի, ինչպես նաև շաբաթ և կիրակի օրերի (բացառությամբ այն դեպքերի, երբ այդ օրերը կամ դրանցից մեկը Կառավարության կողմից հայտարարված են աշխատանքային օրեր:
«**Գործառնական օր**». Ընկերության ներքին կանոնակարգերով որոշված աշխատանքային օրվա ժամանակահատվածը, երբ Բրոքերը իրականացնում է գործառնություններ այն է ՀՀ օրենսդրությամբ սահմանված աշխատանքային օրեր, ժամը 10:00-18:00 ժամանակահատվածը:
«**Հաստատում**». Կողմերի կողմից Պատվերի հաստատում:
«**Դիմումի մերժում**». Կողմերի կողմից Պատվերի մերժում:
«**Արժեթղթերի հաշիվ**» ֆինանսական գործիքներով բրոքերային գործարքներ կատարելու նպատակով Բրոքերի մոտ Հաճախորդի անունով բացված բրոքերային արժեթղթերի հաշիվներ և/կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում (DEPENDENT) Հաճախորդի անունով բացված արժեթղթերի հաշիվներ::
«**Դեպոզիտարիա**» կազմակերպված շուկայի լիցենզավորված մասնակից է, որը ծառայություններ է մատուցում ոչ փաստաթղթային արժեթղթերի և անշարժացված փաստաթղթային արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման և փոխանցման համար:
«Back office». Ընկերության աշխատակիցներ, ովքեր ապահովում են Գործարքների կատարումը, վերահսկումը, հաշվետվությունը և հաշվառումը

«**Կողմեր**». Հաճախորդներ և Բրոքեր:
«**Գործարքի էական պայմաններ**» - Գործարքի պայմանների ցանկ, որոնք պետք է համաձայնեցվեն Ընկերության և Կողմերի/Հաճախորդների միջև:
«**Շուկայական պատվեր**»՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը նախատեսում է Ֆինանսական գործիքի գնման և/կամ վաճառքի Պատվերի անհապաղ կատարում այդ պահին շուկայում ձևավորված գնով Պատվերի կատարման միջոցով:
«**Դիրք կամ բաց դիրք**»՝ Հաճախորդի ակտիվների ու պարտավորությունների տարբերություն՝ արտահայտված արժույթով կամ արժեթղթերով, որը հավասար չէ զրոյի:
«**Ածանցյալ գործիքներ**». «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործիքներ՝ այդ թվում տարբերության վրա հիմնված ֆինանսական պայմանագիրը (CFD).
«**ԱՀ** (**Առևտրային հարթակ**)».ցանկացած կարգավորվող շուկա, ինչպես նաև Ֆինանսական գործիքների առևտրի կազմակերպման համար նախատեսված կազմակերպություն, համակարգ կամ այլ միջոց, որը որոշակի կանոնների համաձայն, ապահովում է Ֆինանսական գործիքների առքուվաճառք և դրա արդյունքում վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ:
«**ԱՀ կանոններ**». ԱՀ-ի գործող կանոններ, ընթացակարգեր, քաղաքականություն, կարգադրություններ, կանոնակարգեր, որոնց կատարումը պարտադիր է այդ համակարգի անդամների կամ դրանից օգտվող այլ անձանց համար:
«**Առևտրային նստաշրջան**». ժամանակահատված, որի ընթացքում ԱՀ կանոնների համաձայն տվյալ ԱՀ-ում տեղի է ունենում Ֆինանսական գործիքի առևտուր:
«**Գործակալ**». անձ, որի ներգրավմամբ և միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով՝ Բրոքերը մատուցում է Ծառայությունները Հաճախորդին:
«**Գործարք**». ՝ Ֆինանսական գործիքի օտարման և ձեռքբերման գործարք, որը կատարվում է հանձնարարականների հիման վրա՝ ԱՀ-ից դուրս կամ ԱՀ-ում՝ տվյալ ԱՀ կանոնների համաձայն:
«Forex **գործարք**». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք չհանդիսացող ցանկացած ածանցյալ ֆինանսական գործիք (ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք (գործարք)), որի գինն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է արտարժույթի փոխարժեքից և որը կնքվում է լևերիջով:
«**Լևերիջով գործարքը**». ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործարք, որը կնքվում է լևերիջով, այդ թվում՝ Forex գործարք:
«**Ոչ բավարար ծածկույթով գործարքներ**» Բրոքերի կողմից կամ Գործակալին փոխանցված գործարքները, որոնք կատարվում են Հաճախորդի անունից՝ Հաճախորդի Պատվերի համաձայն (այդ թվում՝ գործարքներ, որոնց դեպքում Ընկերությունը ընդունում է Հաճախորդի Պատվերը և փոխանցում դրանց կատարումը Գործակալին, այդ թվում՝ ցանկացած Առևտրային Հարթակի (ԱՀ) միջոցով), սակայն այդ Պատվեր-Հանձնարարականի ներկայացման պահին Հաճախորդի հաշվին առկա չեն բավարար Միջոցներ՝ նրա պարտավորությունները լիարժեք կատարելու համար: Այդ Միջոցները պայմանականորեն կամ փաստացիորեն տրամադրվում են Հաճախորդին Բրոքերի և/կամ Գործակալի կողմից, ինչը հնարավոր է դարձնում տվյալ Գործարքի կնքումը:
«**Միջոցներ**»՝ դրամ (ցանկացած արժույթի) և արժեթղթեր, որոնք Հաճախորդը տրամադրել է Բրոքերին իր հանձնարարականների կատարման և վերջնահաշվարկի ապահովման նպատակով կամ որոնք առաջացել են (ստացվել են) Հաճախորդի հանձնարարականները կատարվելու արդյունքում:
«**Ապահովման պահ**»՝ տվյալ ԱՀ-ում Գործարքի կատարման օրվա առևտրային նստաշրջանին նախորդած առևտրային նստաշրջանի բացման պահ
2.2. Սույն կանոններում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Օրենքով և Օրենքի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստներով:

2.3. Ցանկացած փաստաթղթի հղումը ենթադրում է հղում տվյալ փաստաթղթի ընթացիկ տարբերակին (ներառյալ դրա բոլոր փոփոխություններն ու լրացումները), եթե այլ բան հատուկ նշված չէ հղումում:
2.4. Ցանկացած անձի վկայակոչումը վերաբերում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին, նրա ներկայացուցչին կամ իրավահաջորդին:
2.5. Սույն Կանոնների հավելվածները ու բաղկացուցիչ փաստաթղթերը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Պայմանագրի պայմանները սահմանվում և կարգավորվում են, այդ թվում՝ դրանցում ամրագրված դրույթներով:

## 3. Ընդհանուր դրույթներ

3.1. Կնքելով Պայմանագիրը, Հաճախորդը հանձնարարում է Բրոքերին իրեն մատուցել բրոքերային ծառայություններ, ինչպես նաև բրոքերային սպասարկմանը ուղեկցող ծառայություններ, համաձայն սույն Կանոնների, մասնավորապես՝

- գնել/վաճառել արժեթղթեր կամ արտարժույթ իր անունից, բայց Հաճախորդի հաշվին՝ Հաճախորդի Պատվերի հիման վրա,
- Հաճախորդի պատվերով արժեթղթեր և արտարժույթ գնել/վաճառել Հաճախորդի անունից, Հաճախորդի հաշվին,
- Բրոքերի մոտ Հաճախորդի անունով բացված բրոքերային հաշիվների սպասարկում,
- բրոքերային ծառայություններին առնչվող պահառուական գործառնություններ,
- վերջնահաշվարկի համար անհրաժեշտ արժույթի փոխանակում,
- Ոչ բավարար ծածկույթով բրոքերային գործարքների կնքում
- ՀՀ օրենսդրությամբ և/կամ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ ակտերով ԲԲրոքերի համար սահմանված այլ ծառայությունների մատուցում:

3.2. Պայմանագրի կնքումը և հաճախորդների հետագա սպասարկումն իրականացվում են՝ Ընկերության համաձայն Ընկերության Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային պատժամիջոցների պահպանման դեմ պայքարի ընթացակարգի, Պատժամիջոցների պահպանման քաղաքականության, ինչպես նաև Ընկերության այլ ներքին իրավական ակտերի համաձայն

3.3. Սույն Կանոնները և Պայմանագիրը կազմում են միմյանց անբաժանելի մասը և միայն միասնաբար կազմում են վավեր փաստաթուղթ, որն ամբողջությամբ արտահայտում է կողմերի համաձայնությունը ու կամքը, պարունակում է իրագործելի և կատարման ենթակա դրույթներ: Ընդ որում, եթե Պայմանագրով նախատեսված է այլ բան, քան Կանոնների դրույթներում, ապա գերակայում է Պայմանագրի համապատասխան դրույթը: Սույն կետը չի սահմանափակում Պայմանագրի և սույն Կանոնների տեքստում առանձին հղում կատարելու հնարավորությունը:

3.4. Բոլոր հաստատումները, համաձայնությունները, ծանուցումները, Գործարքները և Պատվերները, որոնք տրամադրվել են Հաճախորդի կողմից INVIA հարթակի միջոցով և/կամ Հաճախորդի էլ. հասցեի միջոցով, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթուղթ /ներառյալ Պայմանագիրը/ ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ Հաճախորդի կողմից ձեռքով ստորագրված փաստաթղթերի իրենց բնօրինակ թղթային համարժեքները:

3.5. Հաճախորդի կողմից Պայմանագիրը INVIA հարթակի միջոցով հաստատելիս Հաճախորդը հավաստում է, որ տեղյակ է, որ դասակարգված է որպես ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ՝ Պայմանագրով/Կանոններով նախատեսված բոլոր ծառայությունների/գործառնությունների համար, ինչը թույլ է տալիս օգտագործել իրավական պահանջները՝ պաշտպանել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդներին, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

3.6. Հաճախորդը պարտավորվում է ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ընկերությանը ցանկացած փոփոխության/հանգամանքի մասին, որը կարող է ազդել նրա դասակարգման վրա՝ որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ և/կամ Ընկերության ծառայությունների օգտագործման ցանկացած և բոլոր սահմանափակումների վրա:

## 4. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը

4.1. Նախքան Պայմանագրի կնքումը Բրոքերը Հաճախորդին տրամադրում է տեղեկատվություն հետևյալի մասին.

1) Բրոքերի և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին,

2) Ֆինանսական գործիքի մասին,

3) գործարքների կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),

4) Գործարքների հետ կապված ծախսերի և միջնորդավճարների մասին:

4.2. Տրամադրվող տեղեկատվությունը Հաճախորդին պետք է հնարավորություն տա հասկանալու իրեն առաջարկվող ներդրումային ծառայության և Ֆինանսական գործիքի էությունը և դրանց հետ կապված ռիսկերը: Այդ տեղեկատվությունը կարող է ներկայացվել Հաճախորդներին ստանդարտ ձևով (մասնավորապես՝ օգտակար հղումների ձևով):

4.3. Բրոքերը Հաճախորդին տրամադրում է հետևյալ տեղեկությունները իր և իր կողմից մատուցվող ծառայությունների մասին՝

1) Բրոքերի անվանումը և կապի միջոցները,

2) տեղեկատվություն այն մասին, թե ինչ լեզուներով Հաճախորդը կարող է կապ հաստատել Բրոքերի հետ և ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկություններ,

3) միմյանց հետ կապ հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու մեթոդները, ինչպես նաև Հանձնարարականների ընդունման և հաղորդման կարգը,

4) այն հիմքերը, որոնց համաձայն Բրոքերն իրավասու է մատուցել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև Բրոքերին լիցենզավորած և (կամ) գրանցած իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները,

5) տեղեկություններ Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին,

6) այն քայլերի համառոտ նկարագիրը, որոնք իրականացվել են Բրոքերի Հաճախորդների միջոցների պաշտպանությունն ապահովելու համար, ներառյալ Բրոքերի կողմից ներդրողների

փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում մասնակցության մասին,

7) շահերի բախման սահմանափակման քաղաքականության համառոտ նկարագիրը, իսկ Հաճախորդի պահանջի դեպքում՝ շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագիրը (Հավելված 9):

4.4. Բրոքերը Հաճախորդին պետք է տեղեկացնի նաև՝

1) Հաճախորդի Միջոցները Բրոքերի անունից գրավադրման կամ փոխառությամբ տրամադրելու հնարավորության մասին,

2) Բրոքերի պարտավորությունների մասին, եթե Հաճախորդի Միջոցները փոխառությամբ տրամադրվում են կամ այլ կերպ օգտագործվում են ի շահ Բրոքերի կամ այլ Հաճախորդի:

4.5. Բրոքերը Հաճախորդին պետք է տրամադրի արժեթղթերի և դրանց հետ առնչվող ռիսկերի նկարագիրը, որով պարզ և հասկանալի ձևով ներկայացվում են յուրաքանչյուր տեսակի (բաժնետոմս, պարտատոմս և այլն) Արժեթղթի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց առնչվող ռիսկերը:.

4.6. Եթե Բրոքերը Հաճախորդին տրամադրում է տեղեկություններ այնպիսի արժեթղթերի մասին, որոնք այդ պահին հրապարակային առաջարկի առարկա են և այդ նպատակով ազդագիր է հրապարակվել, ապա Հաճախորդին պետք է տեղեկացնի, թե որտեղ է հրապարակված այդ ազդագիրը կամ որտեղից կարելի է այն ձեռք բերել:

4.7. Այն դեպքում, երբ արժեթղթերից բխող ռիսկերը երաշխավորված են երրորդ անձի կողմից, Բրոքերը Հաճախորդին պետք է ներկայացնի տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորություն տվողի մասին:

4.8. Բրոքերը Հաճախորդին պետք է տրամադրի հետևյալ տեղեկատվությունը ծախսերի և միջնորդավճարների մասին՝

1) Բրոքերի ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Բրոքերի կողմից՝ որպես հարկային Գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա պետք է ներկայացնել հաշվարկման կարգը,

2) եթե Կանոնների 4.8-րդ կետի 1-ին ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, Բրոքերի կողմից կիրառվող փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը,

3) վճարումներ կատարելու եղանակները, ընդ որում՝ գանձվող միջնորդավճարի մասին տեղեկատվությունը Հաճախորդին ներկայացվում է նաև առանձին տողով:

4.9. Կանոնների 4.3 –4.8-րդ կետերի պահանջները (բացառությամբ Կանոնների 4.4-րդ կետի 2-րդ ենթակետից), կարող են չպահպանվել պրոֆեսիոնալ Հաճախորդների դեպքում: Հաճախորդը կարող է համարվել պրոֆեսիոնալ ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգով սահմանված կարգով:

## 5. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում հաճախորդից պահանջվող տեղեկություններ

5.1. Բրոքերը Հաճախորդից պահանջում է տեղեկատվություն իր կողմից մատուցվող ներդրումային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին, որը հնարավորություն կտա գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին: Եթե Բրոքերը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող ներդրումային ծառայությունը կամ Արժեթուղթը չի համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա Բրոքերը գրավոր կամ բանավոր ձևով զգուշացնում է Հաճախորդին այդ մասին

5.2. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում Կանոնների 5.1-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, Բրոքերը գրավոր կամ բանավոր ձևով զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք Բրոքերի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունը կամ Արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

5.3. Բրոքերը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ այն դեպքի, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճիշտ կամ ոչ լիարժեք:

## 6. Պրոֆեսիոնալ եվ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների չափանիշները

6.1. Նախքան Պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը Բրոքերը դասակարգում է Հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ բրոքերային բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:

6.2. Պրոֆեսիոնալ Հաճախորդ են համարվում.

1) ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը, բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն.
2) Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը.
3) միջազգային ֆինանսական կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը.
4) իրավաբանական անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.
ա. Պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
բ. Պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված անձի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,

գ. Պայմանագրի կնքման պահին նախորդող ամսվա վերջի դրությամբ (հայտնի չլինելու դեպքում վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

6.3. Հաճախորդի նախաձեռնությամբ Բրոքերի կողմից պրոֆեսիոնալ Հաճախորդ կարող են դասակարգվել Կանոնների 6.2-րդ կետում չնշված այն անձինք, ովքեր բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

1) Հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

2) Հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

3) Հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է Հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:

6.4. Բրոքերի կողմից Կանոնների 6.3-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ Հաճախորդի դասակարգումը համարվում է վավեր, եթե Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ Բրոքերի կողմից իրականացված գնահատումը հավաստիացնում է, որ Հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի: Կազմակերպությունների դեպքում գիտելիքի և փորձի վերաբերյալ գնահատումն իրականացվում է կազմակերպության այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի նկատմամբ, որն իրավասու է կազմակերպության անունից գործարքներ կնքել:

6.5. Կանոնակարգ 4/05-ով սահմանված որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները Բրոքերի համար ուղեցույց են հանդիսանում Հաճախորդների՝ Կանոնների 6.4-րդ կետում նշված գիտելիքների և փորձի գնահատման համար:

6.6. Բրոքերի կողմից Հաճախորդի ունակության և գիտելիքների գնահատման նպատակով Հաճախորդին տրամադրվում է 30 թեստային հարցերից կազմված հարցաթերթիկ և այն լրացնելու համար տրվում է 60 րոպե ժամանակ: Հաճախորդների ունակության և գիտելիքների գնահատման անցողիկ արդյունք է համարվում հարցաթերթիկում նշված հարցերի 70 և ավելի տոկոսին Հաճախորդի կողմից տրված ճիշտ պատասխանների առկայությունը:

6.7. Հաճախորդի կողմից լրացված թեստային հարցաթերթիկի հիման վրա նույն աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է Պատասխանատու աշխատակցի կողմից ստորագրված արձանագրություն, որը ներառում է Հաճախորդի ունակության և գիտելիքի գնահատման արդյունքները:

6.8. Նախքան պրոֆեսիոնալ Հաճախորդի հետ Պայմանագիր կնքելը կամ Կանոնների 6.3-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգելը՝ Բրոքերն այդ Հաճախորդին գրավոր տեղեկացնում է այն մասին, որ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և Հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:

6.9. Կանոնների 6.3-րդ կետում նշված Հաճախորդները, որոնք Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի մասով կամ բոլոր ծառայությունների, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին վերաբերող ծառայության կամ

ծառայությունների մասով նախաձեռնել են պրոֆեսիոնալ դասակարգվել, համապատասխան գրավոր հայտարարություն են ներկայացնում Բրոքերին այն մասին, որ.

1) համաձայն են դասակարգվել որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ՝ տվյալ ծառայության կամ գործարքի մասով,

2) տեղյակ են, որ որևէ ծառայության կամ որևէ գործարքի մասով որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգվելու դեպքում Հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ տվյալ ծառայության կամ գործարքի մասով, և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

6.10. Նախքան պրոֆեսիոնալ Հաճախորդների հետ Լևերիջով գործարքների, այդ թվում՝ Forex գործարքների հետ կապված գործարքներ կնքելը կամ Կանոնների 6.3-րդ կետում նշված անձանց՝ Լևերիջով գործարքների, այդ թվում՝ Forex գործարքների մասով պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգելը.

1) Բրոքերը Հաճախորդին ծանուցում է տվյալ գործարքներին առնչվող ռիսկերի մասին: Լևերիջով գործարքներ, այդ թվում՝ Forex գործարքներ կնքելու նպատակով առցանց ԱՀ-ներին մուտք գործելու հնարավորության տրամադրումը համարվում է Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման հետ կապված ներդրումային ծառայություն կամ իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,

2) տվյալ Հաճախորդները գրավոր հայտարարություն են ներկայացնում Բրոքերին այն մասին, որ տեղյակ են Լևերիջով գործարքներին, այդ թվում՝ Forex գործարքներին առնչվող ռիսկերի մասին, ընդ որում՝ այս հայտարարությունն անհրաժեշտ է ներկայացնել Կանոնների Հավելված 10-ով սահմանված բովանդակությամբ:

6.11. Կանոնների 6.2-րդ կետում նշված Պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդի նախաձեռնությամբ, կամ եթե առկա է Հաճախորդի համաձայնությունը՝ նաև Բրոքերի նախաձեռնությամբ, թույլատրվում է պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ Հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

6.12. Բրոքերն իր և Հաճախորդի միջև կնքվող Պայմանագրում ներառում է դրույթ, որի համաձայն նշվում է, որ եթե պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ Հաճախորդի պարտավորությունն է դիմել Բրոքերին՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից:

6.13. Պրոֆեսիոնալ Հաճախորդ համարվող անձը Կանոնների 6.11-րդ և 6.12-րդ կետերի համաձայն Բրոքերի կողմից դասակարգվում է ոչ պրոֆեսիոնալ Բրոքերի հետ կնքված Պայմանագրի հիման վրա: Պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք Հաճախորդի ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է բրոքերային բոլոր ծառայություններին, որևէ գործարքին, թե արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին:

## 7. **Երաշխիքներ և հավաստումներ**

*7.1 Միանալով Կանոններին և կնքելով Պայմանագիր Հաճախորդը հավաստիացնում է, որ.*

7.1.1. Հաճախորդը իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրությանը համապատասխան պատշաճ գործունակ անձ է և իրավասու է կնքել Պայմանագիր:

7.1.2. Պայմանագիրը ստորագրած անձինք (իրավաբանական անձի դեպքում) իրավունք ունեն ստորագրել այն Հաճախորդի անունից՝ համաձայն գործող օրենսդրության և Հաճախորդի ներքին իրավական ակտերի, և նման ստորագրությամբ ընդունում են իրավաբանորեն պարտադիր պարտավորություններ:

7.1.3. Հաճախորդի Պայմանագրով Գործարք կնքելու համար Ընկերության կողմից օգտագործվող և ստացված միջոցները (արժեթղթեր և դրամական միջոցներ) ծանրաբեռնված չեն երրորդ անձանց իրավունքներով և ստացվել են օրինական աղբյուրներից:

7.1.4. Հաճախորդը պատշաճ կերպով կարդացել է Պայմանագիրը, Կանոնները, Սակագները, հայտարարությունները, ծանուցումները, նախազգուշացումները և այլ փաստաթղթերը որոնք տեղադրված են Ընկերության պաշտոնական կայքում, դրանց հետ կապված հարցեր կամ առաջարկություններ չունի, լրացուցիչ պարզաբանումների/բացատրման կարիք չունի դրանց բովանդակությունը և լիովին հասկանում և ընդունում է դրանք:

7.1.5. Մինչև Պայմանագրի կնքումը/հաստատումը նախապես ծանոթացել է Պայմանագրի, Պայմանների և Սակագների բովանդակությանն ու պայմաններին, ծանոթացել/ծանոթանալու է Պայմանագրի շրջանակներում կամ ի կատարումն Պայմանագրի իր կողմից ներկայացվող/ներկայացված արժեթղթերի ձեռքբերման/օտարման/տնօրինման ցանկացած Գործառնությունների և Հանձնարարականների բովանդակությանը, իր կողմից ներկայացվող Գործառնություններից և Հանձնարարականներից յուրաքանչյուրի մասով հաստատում է, որ տեղեկացված է և տիրապետում է Գործառնությունների և Հանձնարարականների ներկայացման և/կամ դրանցում նշված արժեթղթերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությանը, ներառյալ, սակայն չսահմանափակվելով այդ արժեթղթերի տեղեկատվական թերթիկին, ազդագրին, առաջարկի պայմաններին, սահմանափակումներին և պահանջներին, և համապատասխանում է Հանձնարարականների ներկայացման /արժեթղթերի ձեռքբերման/օտարման և/կամ տնօրինման համար սահմանված ցանկացած և բոլոր պահանջներին:

7.2 Պայմանագրի և սույն Կանոնների շրջանակներում Ընկերությունը հայտարարում և հավաստիացնում է, որ.

7.2.1. պատշաճ գործունակ անձ է և լիազորված է Հաճախորդի հետ պայմանագիր կնքել,

7.2.2. կան բոլոր լիցենզիաները և թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են Ընկերության կողմից բրոքերային ծառայություններ մատուցելու համար,

7.2.3. չի կնքել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու համաձայնագիր:

## 8. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

### 8.1. **Բրոքերը պարտավոր է.**

8.1.1. Սույն Կանոնների դրույթներին համապատասխան մատուցել բրոքերային ծառայություններ, ինչպես նաև բրոքերային ծառայությանն ուղեկցող ծառայություններ,

8.1.2. Կատարել հաճախորդների Պատվերները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

8.1.3. Հնարավորության դեպքում անհապաղ տեղեկացնել Հաճախորդին, եթե առաջ են եկել հանգամանքներ, որոնք կարող են խոչընդոտել Հաճախորդի պատվերի կատարմանը,

8.1.4. Կանոններով և Արտարժույթի կանոններով սահմանված կարգով Հաճախորդին տրամադրել վերջինիս պատվերների հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ հաշվետվություններ,

8.1.5. Պահպանել Պայմանագրի և պատվերների հետ կապված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի օրենսդրությամբ,

8.1.6. Ապահովել Հաճախորդի դրամական միջոցների պահպանումը և հաշվառումը՝ իր միջոցներից և իր այլ հաճախորդների միջոցներից առանձնացված հաշվառումը,

8.1.7. Հաճախորդից համապատասխան պահանջ ստանալու դեպքում կամ Պայմանագիրը լուծվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին վերջինիս կողմից տրամադրված վավերապայմանների հիման վրա փոխանցել Հաճախորդին պատկանող դրամական միջոցները,

8.1.8. Առնվազն 5 տարվա ընթացքում պահպանել Պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և Հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները,

8.1.9. Կատարել Հայաստանի օրենսդրությամբ, Կանոններով, Արտարժույթի կանոններով կամ Պայմանագրով իր համար սահմանված այլ պարտականությունները:

8.2 **Բրոքերն իրավունք ունի**.

8.2.1. Իր մատուցած ծառայությունների դիմաց Հաճախորդից ստանալ վարձատրություն (այսուհետ նաև միջնորդավճար)՝ Սակագներով սահմանված չափով և կարգով,

8.2.2. Իր մոտ վարվող Հաճախորդի հաշվից գանձել Պատվերի կատարման համար իրեն հասանելիք վարձատրության գումարը,

8.2.3. Չկատարել Հաճախորդի Պատվերները, եթե վերջինս չի վճարել նախկինում կատարված Պատվերների համար Ընկերությանը հասանելիք վարձատրության գումարները,

8.2.4. Իր կողմից սահմանված պարբերականությամբ Հաճախորդից պահանջել սույն պայմանագրի կնքման ժամանակ Հաճախորդի նույնականացման և պատշաճ ուսումնասիրության շրջանակներում Հաճախորդից ստացված տեղեկությունների թարմացման համար անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը,

8.2.5. Միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ լուծման ենթադրվող պահից առնվազն (10) տասը օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Հաճախորդին,

8.2.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ երկրների օրենսդրությամբ, Ընկերության Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային պատժամիջոցների պահպանման դեմ պայքարի ընթացակարգի, Պատժամիջոցների պահպանման քաղաքականության, ինչպես նաև Ընկերության այլ ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում, իր հայեցողությամբ, առանց 8.2.5 կետում նշված ժամկետի պահպանման լուծել սույն Պայմանագիրը, արգելափակել Հաճախորդի բրոքերային հաշիվը և/կամ սառեցնել Հաճախորդի ակտիվները,

8.2.7. Ընկերությունն անհրաժեշտության դեպքում իրավունք ունի առանց նախապես ծանուցման փակել Բաց դիրքերը, եթե Հաճախորդի մարժային պարտավորության մակարդակն անցնում է կրիտիկական շեմը:

8.2.8. Ընկերությունն իրավունք ունի առանց նախապես ծանուցման փակել Հաճախորդի Բաց դիրքերը, եթե Ընկերության նկատմամբ Հաճախորդի որևէ պարտավորության մարման համար այլ միջոցներ հասանելի չեն:

8.2.9. Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի հաշվից գանձել նաև ուշացման տույժեր, եթե պարտավորությունները չկատարվեն ժամանակին: Գանձումը կկատարվի այնպիսի դրույքաչափով, որն ընդունված է Ընկերության կողմից, որը ողջամտորեն համադրելի կլինի նման ժամկետանց ֆինանսավորման արժեքին:

8.3 **Հաճախորդը պարտավոր է**.

8.3.1. Ընկերության համապատասխան պահանջի դեպքում Ընկերությանը տրամադրել Կանոնների 8.2.4 կետով սահմանված տեղեկություններն ու փաստաթղթերը՝ պահպանելով տեղեկատվության ամբողջական, արժանահավատ և ժամանակին լինելու սկզբունքը,

8.3.2. Մինչև Ընկերությունը պատվեր ներկայացնելու պահը կամ կողմերի համաձայնությամբ սահմանված այլ ժամկետում վճարել պատվերի կատարման համար Ընկերության հասանելիք միջնորդավճարը՝ այն փոխանցելով Ընկերության բանկային հաշվին կամ ապահովելով Ընկերությունում իր համար բացված բրոքերային հաշվին,

8.3.3. Իր Պատվերի կատարման մասին Ընկերությունից ստացված հաշվետվության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնել Ընկերությունը հաշվետվության ստացման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

8.3.4. Կատարել Հայաստանի օրենսդրությամբ, Արտարժույթի կանոններով կամ Կանոններով իր համար սահմանված այլ պարտականությունները,

8.3.5. Հաճախորդը ինքնուրույն պատասխանատվություն է կրում մարժինալ ցուցանիշների մոնիթորինգի համար, որոնց մասին տեղեկատվությունը Բրոքերի կողմից տրամադրվում է մարժինալ առևտրի իրականացման շրջանակներում: Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Ընկերությունը կարող է Հաճախորդից պահանջել ավելացնել Հաճախորդի Հաշվի գումարը՝ ըստ մարժայի պահանջի: Մարժայի պահանջը կարող է պայմանավորված լինել մի շարք պայմաններով, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Ընկերությունում Հաճախորդի ընդհանուր դիրքով, Հաճախորդի հաշվի չափով, բաց գործարքների մարժայի չափով, գործարքների ծավալով, Հաճախորդի գործարքների պատմությամբ և շուկայի պայմաններով:

8.3.6. Ոչ բավարար ծածկույթով և լևերիջով գործարքների ժամանակ Հաճախորդը պարտավորվում է ինքնուրույն հետևել իր հաշվին առկա կապիտալի բավարարությանը մարժինալ դիրքերը ծածկելու համար, և ընդունում է, որ Բրոքերը պատասխանատվություն չի կրում իր հաշվին առկա կապիտալի անբավարարության համար: Բրոքերն իրավունք ունի փակել Հաճախորդի դիրքերը առանց նախնական ծանուցման, եթե կապիտալի պակաս կա մարժայի պահանջները ծածկելու համար:

8.4 **Հաճախորդը իրավունք ունի**.

8.4.1. Միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ լուծման ենթադրվող պահից առնվազն տասը օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

8.4.2. Իր պատվերի կատարման մասին Ընկերությունից ստանալ հաշվետվություններ և ներկայացնել դրանց վերաբերյալ առարկություններ:

## 9. Հաճախորդի կողմից Պատվերների ներկայացման կարգը

9.1. Հաճախորդի արժեթղթերով և/կամ միջոցներով Գործարքներ կնքելու հիմք է հանդիսանում միայն Հաճախորդի կողմից մինչև այդ Գործարքը կնքելը Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերը/Հանձարարականը:

9.2. Պատվերները/Հանձնարարականները ներկայացվում են Հաճախորդի կողմից Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևանմուշներով (Հավելված 1, Հավելված 2, Հավելված 3, Հավելված 4, Հավելված 15) թղթային ձևով Ընկերության տարածքում կամ էլեկտրոնային եղանակով, հեռախոսով կամ Հաճախորդի INVIA հարթակի անձնական սենյակի միջոցով: Էլեկտրոնային եղանակով Պատվերները համարվում են ստացված, եթե դրանք ուղարկվել են inviatrade@inviabroker.com և/կամ hello@inviabroker.com էլեկտրոնային հասցեներին: Եթե Հաճախորդը պատվեր է ներկայացնում Գործառնական օրվա ավարտից հետո, ապա Պատվերը ենթակա է կատարման հաջորդ աշխատանքային օրը:

9.3. Պատվերը ներկայացնելուց առաջ կամ դրա հետ միաժամանակ Հաճախորդը պետք է Ընկերությանը տրամադրի նաև Գործարքի կատարման համար անհրաժեշտ գումարը (բացառությամբ ոչ բավարար ծածկույթով գործարքների), ինչպես նաև այդ պատվերի կատարման համար գանձվող միջնորդավճարը: Սույնով Ընկերությունը իրեն իրավունք է վերապահում սահմանված կարգով, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, գանձել Հաճախորդի հաշիվներում առկա դրամական միջոցները համապատասխան գործարքի կատարման պահին կամ դրանից հետո ցանկացած ժամանակ:

9.4. Հաճախորդը կարող է ներկայացնել անբավարար ծածկույթով գործարք կնքելու Պատվեր և այդ նպատակով Ընկերությունից ստանալ դրամական միջոցների կամ արժեթղթերի փոխառություն:

9.5. Ընկերությունը կարող է հրաժարվել Պատվերի ընդունումից և/կամ ընդունված Պատվերը կատարելուց, եթե՝

9.5.1. այն չի ներկայացվել սույն Կանոններին համապատասխան ձևով և բովանդակությամբ.

9.5.2. այն չի ներկայացվել սույն Կանոններով սահմանված կարգով.

9.5.3. Ընկերությունը լուրջ կասկածներ ունի սույն Կանոններով սահմանված նույնականացման գործողությունների արդյունքում Պատվեր ներկայացնող անձի կողմից այն ներկայացնելու իրավասության վերաբերյալ:

9.5.4. սույն Կանոններով սահմանված այլ դեպքերում:

9.5.5. Ընկերության գործակալները հրաժարվում են ընդունել և/կամ կատարել համապատասխան Հաճախորդի կողմից ներկայացված և Բրոքերի կողմից նրանց փոխանցված Պատվերը՝ համարելով, որ նրանք չեն կարող ապահովել գործարքների կնքումը/կատարումը որոշակի շուկաներում և ԱՀ-ներում:

9.5.6. Ընկերության համար օբյեկտիվորեն անհնար է դարձել, իր վերահսկողությունից դուրս որևէ պատճառով, կատարել Պատվերը:

9.5.7. Արգելքներն ու սահմանափակումները, որոնք անհնարին են դարձնում Պատվերի կատարումը, որոշվում կամ կիրառվում են համապատասխան ԱՀ-ի կամ Գործակալների կողմից,

9.5.8. Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում:

9.6. Ընկերությունը Պատվերի ընդունման կամ ընդունված Պատվերի կատարման մերժման փաստի վերաբերյալ տեղեկացնում է Հաճախորդին Կանոնների 9.2 կետով սահմանված ցանկացած ծանուցման եղանակով, ներառյալ Հաճախորդի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստին ծանուցման միջոցով:

9.7. Հաճախորդի կողմից արժեթղթերի վաճառքի Պատվերի ներկայացումը համարվում է Ընկերությանը լիազորագրի տրամադրում՝ Կանոններում նշված արժեթղթերով առևտրի համար:Եթե Պատվերի վավերականության ժամկետը նշված չէ, ապա այն ուժի մեջ է մինչև Գործարքն ավարտելու համար Պատվերի ներկայացման պահին սկսված առաջին առևտրային նստաշրջանի ավարտը կամ դրանից հետո:

9.8. Հաճախորդն իրավունք ունի ներկայացնել տրված Պատվերի հետկանչի հաղորդագրություն: Հետկանչի հաղորդագրությունը ներկայացվում է նույն եղանակով ինչպես ներկայացվել է Պատվերը: Հաղորդագրությունը ընդունվում է ի կատարումն, եթե տվյալ հետկանչվող Պատվերով Բրոքերի կողմից դեռևս Գործարքի կնքման հայտը կամ օֆերտան չի բավարարվել և/կամ ակցեպտավորվել: Պատվերի հետ կանչման հաղորդումը համարվում է ընդունված հաղորդագրությունը Բրոքերի Պատասխանատու աշխատակցին հասնելու պահից: Հաճախորդի հետկանչման հաղորդումը ստանալու պահից մինչև Բրոքերի կողմից համապատասխան Պատվերով համապատասխան ԱՀ-ից գործարքի կնքման հայտը հետ կանչելու հաստատվելն ընկած ժամանակահատվածում Պատվերով Գործարքը կնքվելու դեպքում, Պատվերը հետ կանչելու մասին հաղորդագրությունը Բրոքերի կողմից չի կատարվում:

9.9. Գործարքներ կնքելու համար ԱՀ-ների կամ Գործակալների կողմից 1 Պատվերով գնվող/վաճառվող Ֆինանսական գործիքների նվազագույն քանակական/ծավալային սահմանափակումներ սահմանված լինելու դեպքում այդ սահմանափակումները տարածվում են նաև Հաճախորդի պատվերի վրա, որի մասին Բրոքերը տեղյակ է պահում Հաճախորդին:

9.10. Հաճախորդն ընդունում է, որ Պատվերով ձեռքբերման ենթակա Ֆինանսական գործիքների շրջանակը, Գործարքների ծավալները, Գործարքներով Պատվերների ներկայացման վերջնաժամկետները սահմանափակվում են նշված Գործարքների կատարումը ապահովող Գործակալների և ԱՀ-ների կողմից սահմանված արժեթղթերի ցանկով, ծավալային սահմանափակումներով (սահմանաչափերով) և Հանձնարարականների ներկայացման (կատարման) ժամկետային սահմանափակումներով: Ամեն դեպքում, Պատվերները Բրոքերը ընդունում է Գործառնական օրվա ընթացքում, ընդ որում տվյալ ԱՀ-ում Առևտրային նստաշրջանի ավարտից հետո և մինչև մյուս Առևտրային նստաշրջանի սկսվելը ներկայացված Շուկայական պատվերը ենթակա չէ կատարման կամ ի կատարումն հաղորդման:

9.11. Հաճախորդների շահերի պաշտպանության, լավագույն գնով գործարք իրականացնելու նպատակով պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունները կարող են իրականացվել ինչպես Հայաստանի ֆոնդային բորսայում այնպես էլ բորսայից դուրս: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ԱՀ-ների գործողությունների կամ անգործության արդյունքում, ինչպես նաև Գործարքի կողմ հանդիսացող անձանց կողմից Հաճախորդի Միջոցներով Վերջնահաշվարկի չկայացման կամ ոչ պատշաճ իրականացման

համար՝ անկախ դրա պատճառներից, ինչպես նաև ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների (այդ թվում այն դեպքերում, երբ ծառայությունները մատուցվում են Հաճախորդին ԱՀ-ի միջոցով և տեղի է ունենում ԱՀ-ի տեխնիկական խափանում) արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ այդպիսի խափանումները և վնասը տեղի են ունեցել Բրոքերի դիտավորության և/կամ անգործության արդյունքում:

## 10. Գործարքների կնքման և կատարման կարգը

10.1. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելիս Ընկերությունը պետք է՝

10.1.1. համոզվի, որ Գործարք կատարելու համար Պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,

10.1.2. այլ հավասար պայմաններ ունեցող Պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե Պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և

10.1.3. Հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնումՀաճախորդի Պատվերի ճշգրիտ կատարումը:

10.2 Ընդհանուր առմամբ ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Ընկերությունը կարող է համախմբել իր Հաճախորդի Պատվերը կամ իր հաշվին կատարվող Գործարքն իր մեկ այլ Հաճախորդի Պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝

10.2.1. որևէ Հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա Պատվերը կատարվեր առանձին,

10.2.2. ընդհանուր առմամբ այն բխում է Հաճախորդի շահերից:

10.3 Եթե Ընկերությունը իր Հաճախորդի Պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող Գործարքի հետ, ապա այդ համախմբված Պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է Հաճախորդին

10.4 Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում և կարգավորվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և այդ շուկայի օպերատորի կողմից սահմանված կանոնների համաձայն:

10.5 Չկարգավորվող շուկայում Ընկերության կողմից գործարքները կնքվում և կատարվում են Օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի համաձայն: Չկարգավորվող շուկայում գործարքների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են Ընկերության և հաճախորդի միջև կնքված և/կամ արժեթղթերի առքուվաճառքի պայմանագրերով:

10.6 Հաճախորդի պատվերները կատարելու համար Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ ներգրավել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ ֆինանսական շուկաներում մասնագիտացած անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայություններից և տեխնիկական աջակցությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ նշվում է կոնկրետ միջնորդ, որի միջոցով տրվում է պատվերը Հաճախորդին:

## 11. Ոչ բավարար ծածկույթով գործարքների (մարժինալ առևտրի) իրականացման կարգը

11.1 Ընկերությունը իր Հաճախորդներին կարող է  տրամադրել ոչ բավարար ծածկույթով գործարքներ իրականացնելու հնարավորություն:

11.2 Ոչ բավարար ծածկույթով գործարքների համար բրոքերային ծառայությունների մատուցման պայմաններն ու առանձնահատկությունները սահմանվում են Բրոքերի և Հաճախորդի միջև առանձին համաձայնագրով: Նշված համաձայնագիրը (առկայության դեպքում) հանդիսանում է Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի անբաժանելի մասը: Սույն Կանոնների պայմանները կիրառվում են նման համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով դրանք չեն հակասում դրա դրույթներին:

11.3. Հաճախորդը իրավունք ունի ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելու Հանձնարարականը ուղարկել միայն նախապես կնքված համապատասխան լրացուցիչ համաձայնագրի առկայության դեպքում և դրա պայմաններին համապատասխան:

11.4 Բրոքերն իրավունք ունի մերժել ընդունված Հանձնարարականի կատարումը, եթե դրա ընդունումից հետո պարզվի, որ Հաճախորդի հաշվում բացակայում են բավարար միջոցներ՝ Հանձնարարականը կատարելու և միջնորդավճարը վճարելու համար (բացառությամբ ոչ բավարար ծածկույթով գործարքների մասին համաձայնագրով նախատեսված դեպքերի): Ընդ որում, Բրոքերն իրավունք ունի պակասող գումարը Հաճախորդի հաշվից դուրս գրել անակցեպտ կարգով, առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու, գործարքի կնքման պահին կամ դրան հաջորդող ցանկացած ժամանակ: Հանձնարարությունը կարող է նաև չկատարվել, եթե այն միջոցները, որոնցով այն տրվել է, ծանրաբեռնված են երրորդ անձանց իրավունքներով կամ արգելափակված են:

11.5. Ընկերությունը կարող է Հաճախորդներին տրամադրել ոչ բավարար ծածկույթով գործարքների հետևյալ տեսակները.

11.5.1. ֆինանսական գործիքների կարճ վաճառք. հաշվից բացակայող արժեթղթերի վաճառք' դրանք ավելի ուշ գնելու պարտավորությամբ ՝ օգտագործելով առկա կամ ձեռք բերվող ակտիվները որպես ապահովություն,

11.5.2. ֆինանսական գործիքների գնում մարժայով. արժեթղթերի գնում ՝ առանց հաշվի վրա բավարար սեփական միջոցներ ունենալու ՝ օգտագործելով առկա կամ ձեռք բերվող ակտիվները որպես գրավ:

11.6. Մարժինալ ցուցանիշները, ինչպես նաև Ֆինանսական գործիքների համար կիրառվող ռիսկի դրույքաչափերը հասանելի են դառնում Հաճախորդներին Ընկերության պաշտոնական վեբկայքում և/կամ Ընկերության կողմից տրամադրված ծրագրային տերմինալում: Հաճախորդի լիկվիդային պորտֆելի արժեքի նվազման դեպքում՝ մինչև նվազագույն մարժայի մակարդակից ցածր, Բրոքերը իրավասու է սեփական հայեցողությամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն հարկադիր կերպով փակել Հաճախորդի դիրքերը՝ առաջնորդվելով Ընկերության  Բրոքերային կողմից որպես 100% ապահովվածության չդասակարգվող հաճախորդների դիրքերը փակելու կարգի մասին կանոնակարգով:

## 12. Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների առանձնահատկությունները

12.1. Ածանցյալներով Բրոքերային ծառայությունները մատուցվում են համապատասխան ածանցյալների առևտուր կազմակերպող ԱՀ-ների և Գործակալների կողմից սահմանված պայմանների համաձայն և դրանց կողմից սահմանված սահմանափակումները հաշվի առնելով:

12.2. Աձանցյալներով ծառայությունների տրամադրման ժամանակ սահմանվող մարժայի նվազագույն չափը սահմանվում է Կենտրոնական բանկի կանոնակարգ 4/07-ի համաձայն:

12.3. Որոշակի Աձանցյալներով գործարքների հետ կապված Հաճախորդի բաց դիրքի առկայության դեպքում՝ տվյալ ԱՀ-ում Աձանցյալի Ապահովման պահին Հաճախորդի հաշվում Աձանցյալի կատարումից բխող պարտավորությունները բավարարելու համար անհրաժեշտ Միջոցների անբավարարության դեպքում, Բրոքերին Կանոններով իրավունք է վերապահվում՝ փակել Աձանցյալով Հաճախորդի բաց դիրքը՝ գնելով/վաճառելով Աձանցյալը: Միևնույն ժամանակ Ապահովման պահին Միջոցների բավարարության դեպքում՝ Ապահովման պահից մինչև Բրոքերի կողմից տվյալ Աձանցյալով բաց դիրքի փակումը կամ Աձանցյալի փաստացի կատարումն ընկած ժամանակահատվածում Բրոքերն իրավունք ունի չընդունել և ի կատարումն չփոխանցել Հաճախորդի այն Հանձնարարականները, որոնցով Գործարքների գինը գերազանցում է Հաճախորդի հաշվում առկա Միջոցների ընդհանուր արժեքի և Գործարքի կատարման համար անհրաժեշտ միջոցների տարբերությունը

## 13. Միջոցների հաշվառում, պահառուական եվ վերջնահաշվարկի գործառնություններ

13.1. Հաճախորդի կողմից ներկայացված հայտի հիման վրա Ընկերությունը հաճախորդի համար բացում է բրոքերային հաշիվներ՝ բրոքերային գործարքներ իրականացնելու համար: Բրոքերի կողմից ծառայությունների մատուցման համար նախատեսված կամ դրանց արդյունքում ստացված Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են Բրոքերի և Հաճախորդի միջև կնքված պահառության պայմանագրի համաձայն բացված և սպասարկվող Արժեթղթերի հաշիվներում:

13.2. Բրոքերային հաշվի համալրում է կատարվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում

13.3. Բրոքերային ծառայությունների մատուցման համար նախատեսված, ինչպես նաև դրանց արդյունքում ստացվող՝ Հաճախորդի դրամական միջոցները Բրոքերի կողմից փոխանցվում են Հաճախորդի Բրոքերային հաշիվներին՝ Գործարքի վերջնահաշվարկ իրականացնելու արդյունքում կամ Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա:

13.4. Բրոքերային հաշիվներում առկա դրամական միջոցների (այն չափով, որով դրանք ծանրաբեռնված չեն ընդունված և/կամ կատարված Պատվերով, Բրոքերի կամ երրորդ անձանց իրավունքներով) և Պայմանագրի (Կանոնների) համաձայն Բրոքերին վճարման ենթակա գումարների տարբերությունը հանդիսանում է Հաճախորդի նկատմամբ Բրոքերի անժամկետ պարտավորությունը:

13.5. Ընկերությունը Հաճախորդին տոկոսներ չի վճարում կամ չի հաշվարկում բրոքերային հաշիվների մնացորդի վրա: Հաճախորդի բրոքերային հաշվի վրա կատարված գործարքները սահմանափակվում են՝

1) բրոքերային հաշվից միջոցների դուրսբերում և փոխանցում բանկերում հաճախորդի բանկային հաշիվներին.

2) Հաճախորդի բանկային հաշվից դրամական միջոցների մուտքագրում.

3) Կանոնների համաձայն Վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ գործառնություններ:

13.6. Բրոքերային գործառնություններն իրականացվում են Հաճախորդի համապատասխան Պատվերի հիման վրա, Գործառնությունները կատարվում են Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան համապատասխան հրամանը ներկայացնելուց հետո ոչ ավելի, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

13.7. Առանց Հաճախորդի Պատվերի Բրոքերային և Արժեթղթերի հաշիվներից միջոցներ կարող են դուրս գրվել դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների հիման վրա, ինչպես նաև օրենքով, Հաճախորդի հետ Բրոքերի կնքած բոլոր պայմանագրերով սահմանված դեպքերում:

13.8. Բրոքերային հաշվով գործարք կատարելու լիազորություն ունեն նույն անձինք, որոնք իրավասու են ներկայացնել Պատվերներ Կանոնների համաձայն:

13.9. Պայմանագրով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Բրոքերը Պայմանագրի շրջանակներում իրեն տրամադրված և ստացված միջոցներն օգտագործի ի շահ իրեն (Բրոքերի), այդ թվում՝ գրավադրի դրանք առանց խախտելու Հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները: Բրոքերը Հաճախորդի Միջոցները կարող է պահել անվանատիրոջ և/կամ իր անունով այլ ֆինանսական հաստատություններում (այդ թվում՝ արտասահմանյան) բացված բանկային (թղթակցային) և/կամ դրամական միջոցների հաշվառման այլ հաշիվներում՝ ՀՀ կամ գործարքի կնքման այլ վայրի օրենսդրության և դրան համապատասխան կնքված պայմանագրերի համաձայն: Բրոքերին իրավունք է վերապահվում գործարքներ կնքելիս համախմբել Հաճախորդի Միջոցները իր այլ Հաճախորդների միջոցների ինչպես նաև իր սեփական միջոցների հետ՝ ամեն դեպքում, սակայն, պահպանելով իր և Հաճախորդի, ինչպես նաև իր տարբեր Հաճախորդների միջոցների առանձնացված հաշվառումը՝ ներքին հաշվառման համակարգի պատշաճ վարման միջոցով:

13.10. Պայմանագրով բրոքերային ծառայություններ մատուցելիս անհրաժեշտ պահառու-հաշվարկային գործառնությունները և արժեթղթերի հաշիվներով գործառնությունները կարգավորվում են համապատասխան պահառության պայմանագրով, «Արժեթղթերի պահառության կանոններով» և այլ ներքին իրավական ակտերով: Բրոքերային ծառայությունները մատուցելիս ձեռքբերվող և վաճառքի համար նախատեսված՝ Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են Բրոքերի կողմից Հաճախորդի համար պահառության պայմանագրի համաձայն բացված Արժեթղթերի հաշիվներում:

13.11. Կանոնների համաձայն ՝ Գործարք կատարելու Պատվերը հանդիսանում է նաև Հաճախորդի հաշիվներով համապատասխան գործառնություն կատարելու հանձնարարական, այդ թվում՝ պահառության պայմանագրի իմաստով, մասնավորապես՝

1) Արժեթղթերի և դրամական միջոցների ընդունում/մուտքագրում հաշվին,

2) Արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցում/ելքագրում հաշվից,

3) Արժեթղթերի և դրամական միջոցների արգելադրում/գրավադրում հօգուտ երրորդ անձանց և/կամ Բրոքերի:

13.12. Հաճախորդը կարող է նաև Բրոքերին ներկայացնել իր Արժեթղթերի հաշիվներով որոշակի գործառնություն (մուտքագրում, ելքագրում, փոխանցում, արգելադրում և այլն) կատարելու հանձնարարական՝ անկախ Բրոքերային գործառնությունների Պատվերից: Նման դեպքում պահառուական գործառնության հանձնարարականը ներկայացվում է պահառության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

13.13. Կանոնների իմաստով Վերջնահաշվարկ է հանդիսանում Բրոքերի կողմից տվյալ Պատվերով կատարված Գործարքի արդյունքում Հաճախորդի պարտավորությունների կատարումը և Գործարքի մյուս կողմից կատարման ընդունումը, մասնավորապես՝

1) Արժեթղթերի ընդունում, հաշվառում և փոխանցում,

2) դրամական միջոցների փոխանցում, ընդունում և հաշվառում, Աձանցյալներով տատանվող հաշվեկշռի լրացում,

3) գործողությունները կատարելու համար անհրաժեշտ արտարժութային փոխարկումներ:

13.14. Եթե Բրոքերային հաշիվների արժույթները չեն համապատասխանում Պատվերով կնքված գործարքով վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ արժույթին կամ Պատվերով գործարքի կատարման արժույթով Հաճախորդի հաշվի մնացորդը չի բավարարում համապատասխան Պատվերով գործարքի արդյունքներով վերջնահաշվարկ կատարելու համար, ապա Ընկերությունը կատարելով Պատվերով գործարքի վերջնահաշվարկը, իրականացնում է համապատասխան արժութային փոխարկումը՝ Վերջնահաշվարկի պահի դրությամբ Բրոքերի կամ Գործակալի կողմից սահմանված Վերջնահաշվարկի արժույթների փոխարժեքին համապատասխան:

13.15. Եթե Պատվերով գործարքի վերջնահաշվարկի կատարման համար անհրաժեշտ արժույթի հաշվարկային դրույքը ՀՀ կենտրոնական բանկի կողմից չի սահմանվում, Բրոքերը կարող է չկատարել կամ ի կատարումն չփոխանցել Հաճախորդի Պատվերը:

13.16. Բրոքերը Հաճախորդի կողմից տրված Պատվերի կատարման արդյունքում Վերջնահաշվարկն իրականացնում է առանց Հաճախորդից լրացուցիչ հանձնարարականներ ստանալու: Հաճախորդը պարտավոր է Կանոնների համաձայն իր անվամբ բացված Հաճախորդի հաշիվներում ապահովել համապատասխան Միջոցների առկայությունը բացառությամբ ոչ բավարար ծածկույթով գործարքների:

13.17. Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդին պատկանող միջոցները փոխանցել իրեն 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդից համապատասխան հարցումը ստանալուց հետո կամ Պայմանագրի դադարեցումից հետո:

## 14. Պատվերների և գործարքների գրանցումը

14.1. Ընկերության ծառայությունների և գործարքների մասով գրանցումները ներառում են համապատասխան տեղեկությունները՝ կապված արժեթղթերով կատարված բոլոր գործարքների հետ՝ անկախ այն բանից, թե ում հաշվին կամ անունից է այն կատարվել:

14.2. Գործարքների մասով գրանցումները պետք է վարվեն այնպիսի եղանակով կամ միջոցներով, որպեսզի բավարարվեն հետևյալ պայմանները.

14.2.1. Կենտրոնական բանկի պահանջով այդ գրանցումները պետք է հասանելի և մատչելի լինեն Կենտրոնական բանկին և պետք է հնարավոր լինի վերծանել կատարված յուրաքանչյուր գործարքի յուրաքանչյուր փուլ,

14.2.2. եթե այդ գրանցումներում փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում, ապա դրանք պետք է կատարվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել այդ գրանցումների սկզբնական բովանդակությունը և յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը, և

14.2.3. պետք է բացառվի երրորդ անձանց կողմից այդ գրանցումների չթույլատրված օգտագործումը:

14.3. Ընկերությունը վարում է գրանցումներ Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր Պատվերի մասով:

14.4. Պատվերների գրանցումը կատարվում է Ընկերության «Ներդրումային եվ ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության եվ տեղեկատվության փոխանակման կանոնակարգ» ով սահմանված կարգով:

14.5. Հաճախորդի Պատվերը կատարելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, պետք է կատարվեն գրանցումներ կատարված Գործարքի մասին:

14.6. Սույն Կանոնների 14.5. կետի համաձայն կատարվող գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.

14.6.1. Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) և(կամ) հաճախորդին նույնականացնող համարը,

14.6.2. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը և օրը,

14.6.3. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

14.6.4. Գործարքի տեսակը (առք, վաճառք),

14.6.5. Գործարքի բնույթը, եթե գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),

14.6.6. Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթերի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

14.6.7. Արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),

14.6.8. Միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),

14.6.9. Ընդհանուր ծավալը,

14.6.10. Գործարքի մյուս կողմը,

14.6.11. Գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),

14.6.12. Գործարքը կատարող Պատասխանատու աշխատակցի անունը, ազգանունը:

14.7. Ընկերությունը պարտավորվում է պահպանել Պայմանագրի, Պատվերների և Գործարքների հետ կապված բոլոր տեղեկատվության գաղտնիությունը, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 15. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը

15.1. Եթե Ընկերությունը կատարել է Հաճախորդի Պատվերը, ապա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև Գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Հաճախորդին տրամադրի Պատվերի կատարման մասին հաշվետվություն: INVIA հարթակի միջոցով կատարված գործարքների վերաբերյալ հաշվետվությունը հասանելի է Հաճախորդի INVIA հարթակի անձնական սենյակում և չի ուղարկում Հաճախորդին:

15.2. Հաճախորդի Պատվերի կատարման մասին հաշվետվությունը առնվազն ներառում է՝

15.2.1. Ընկերության անվանումը,

15.2.2. Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

15.2.3. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,

15.2.4. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

15.2.5. Հաճախորդի կողմից տրված Պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),

15.2.6. Գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),

15.2.7. Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթերի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

15.2.8. Պատվերում նշված գործարքի տեսակը (առուվաճառք),

15.2.9. Պատվերի բնույթը, եթե Պատվերում նշված գործարքի տեսակը առուվաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),

15.2.10. Արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),

15.2.11. Միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),

15.2.12. Ընդհանուր ծավալը,

15.2.13. Գանձվող միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),

15.2.14. Հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),

15.2.15. Տեղեկատվություն այն փաստի մասին, որ հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ Ընկերության մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար,

15.2.16. Տեղեկատվություն գործարքից հետո Ընկերությունում Հաճախորդի ունեցած դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ՝ ըստ յուրաքանչյուր արժույթի:

15.3. Սույն կանոնների 15.1-ին կետում նշված հաշվետվությունը գեներացվում է ավտոմատ եղանակով:

15.4. Եթե Հաճախորդի Պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը Հաճախորդին է ներկայացնում Պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

15.5. Սույն Կանոնում նշված հաշվետվությունները փոխանցվում են Հաճախորդին անձամբ կամ Հաճախորդի գրանցված էլ. հասցեին ուղարկելով, կամ հասանելի է դառնում Հաճախորդին ընկերության INVIA հարթակի միջոցով կամ Հաճախորդին կապի հուսալի միջոցներով ուղարկելու միջոցով:

## 16. Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու համար ձեռնարկվող քայլերը

16.1. Ընկերությունում Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

16.1.1. առանձնացված հաշվառում. Ընկերությունը առանձին հաշիվներ ունի յուրաքանչյուր Հաճախորդի, ինչպես նաև իր և իր Հաճախորդների Արժեթղթերի և դրամական միջոցների համար,

16.1.2. ներքին վերահսկողություն. Ընկերությունն ունի ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում, որը իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության անընդհատ վերահսկողություն՝ նվազագույնի հասցնելով Ընկերության աշխատակիցների կողմից պատահական սխալների և չարաշահումների ռիսկը,

16.1.3. Պատվերների կատարման հստակ քաղաքականության կիրառում,

16.1.4. Ընկերության և Հաճախորդների, ինչպես նաև Ընկերության տարբեր Հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականության կիրառումը:

16.1.5. Մասնակցություն ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում (առկայության դեպքում):

16.2. Բրոքերը կարող է պահել Հաճախորդի միջոցները այլ ֆինանսական հաստատություններում անվանատիրոջ անունով և/կամ նրա անունով (այդ թվում 'արտասահմանյան) բացված դրամական միջոցների հաշվառման բանկային (թղթակցային) և/կամ այլ հաշիվներում' ՀՀ օրենսդրությանը կամ գործարքի կնքման այլ վայրին և դրան համապատասխան կնքված պայմանագրերին համապատասխան:

16.3. Բրոքերի հետ կնքելով Պայմանագիր՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Ընկերությունը կարող է ռեպո գործարքներ կնքել Հաճախորդին պատկանող արժեթղթերով, որոնք հաշվառվում են նրա համապատասխան հաշիվներում, ինչպես նաև գրավադրել դրանք' չխախտելով Հաճախորդի հանդեպ իր ֆիդուցիար պարտավորությունները:

## 17. Դիլերային գործառնություններ արժեթղթերով

17.1. Արժեթղթերով դիլերային գործարքները կարող են կնքվել հետևյալ նպատակներով.

1) Ընկերության սեփական արժեթղթերի պորտֆելի կառավարում.
2) Ընկերության սեփական միջոցների կառավարում.
3) լրացուցիչ շահութաբերության ապահովում.

17.2. Ընկերության սեփական արժեթղթերի պորտֆելի կառավարումը ներառում է հետևյալ գործառնությունները.

1) Պորտֆելի ձևավորում՝ Ընկերության արժեթղթերի ընտրության և գնման գործընթաց՝ պորտֆելի շահութաբերությունը բարձրացնելու նպատակով՝ պահպանելով իրացվելիության պահանջվող մակարդակը.

2) Պորտֆելի վերակառուցում. պորտֆելի կառուցվածքի փոփոխման գործընթաց՝ դրա միջին կշռված եկամտաբերությունը բարձրացնելու նպատակով՝ հաշվի առնելով շուկայի անկայունությունը և/կամ արժեթղթերի իրացվելիության մակարդակը.

3) սեփական պորտֆելից արժեթղթերի մարումից և (կամ) վաճառքից ստացված միջոցների վերաներդրում.

17.3. Դիլերի առաջարկի հիման վրա Լիազորված անձը, հաշվի առնելով իրացվելիության ընթացիկ իրավիճակի մասին տեղեկատվությունը, որոշում է կայացնում իրականացնել 17.2 կետում նշված գործառնությունները:

17.4. Իրացվելիության կառավարման շրջանակներում արժեթղթերով իրականացվում են հետևյալ գործարքները.

1) «Ուղիղ ռեպո գործառնություններ»՝ լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար.

2) «Հակադարձ ռեպո գործառնություններ»՝ առկա միջոցների տեղաբաշխման համար.

17.5. Լրացուցիչ շահութաբերություն ապահովելու համար իրականացվում են հետևյալ գործողությունները.

1) ռեպո/հակադարձ ռեպո գործարքների արբիտրաժը միջոցների ներգրավման/տեղաբաշխման գործընթացն է, որն ուղեկցվում է այդ միջոցների հետագա տեղաբաշխմամբ/գրավմամբ համամասնորեն հավասար պայմաններով՝ տոկոսադրույքների տարբերությունից շահույթ ստանալու նպատակով.

2) առքուվաճառքի գործարքների արբիտրաժ՝ արժեթղթերի առքուվաճառքի գործընթաց, որն ուղեկցվում է համապատասխան արժեթղթերի հետագա վաճառքով/գնմամբ՝ տարբերությունից շահույթ ստանալու նպատակով.

3) շահույթ ստանալու նպատակով ընկերության արժեթղթերի վաճառքի գործարքները սեփական պորտֆելից.

4) արժեթղթերի գնում շահաբաժիններից, արժեկտրոններից և այլ եկամուտներից ընթացիկ եկամուտ ստանալու համար.

17.6. Ընկերության անունից և նրա հանձնարարությամբ գործարքներ վարելու և գործարքներ կնքելու իրավունք ունեն միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից հավաստագրված մասնագետները՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: .

17.7. Արժեթղթերով գործարքները կարող են իրականացվել ինչպես բորսայում (նաև միջազգային), այնպես էլ արտաբորսային շուկայում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և արժեթղթերի շուկան կարգավորող միջազգային օրենսդրության:

17.8. Արժեթղթերի հետ գործարքների արդյունավետ և պարզեցված գործընթաց ապահովելու նպատակով Ընկերությունը կարող է Դիլերային պայմանագրեր կնքել Կողմերի հետ:

## 18. Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների գնագոյացման (ձևավորման) սկզբունքները

18.1. Ընկերությունը Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների մեծությունը որոշելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

18.1.1. *ինքնաֆինանսավորման սկզբունք.* ծառայության դիմաց գանձվող վճարը պետք է լինի այնքան, որ թույլ տա ծածկել տվյալ ծառայության մատուցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև ընկերության համար ապահովի շահույթի որոշակի ընդունելի մակարդակ,

18.1.2. *Հաճախորդի համար մատչելիության սկզբունք.* ծառայությունների դիմաց գանձվող վճարի մեծությունը պետք է ընդունելի և մատչելի լինի հաճախորդի համար և չպետք է հանգեցնի հաճախորդի ֆինանսական վիճակի էական վատթարացման,

18.1.3. *փոխհատուցման արդարության սկզբունք.* ծառայությունների դիմաց գանձվող վճարի մեծությունը ուղիղ կախվածության մեջ է հաճախորդի Պատվերների կատարման բարդությունից, ինչպես նաև դրանց կատարման արդյունքում հաճախորդի ստացած օգուտի մեծությունից:

18.2. Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով,

Վ=Ծ$_գ$ + Հ,

որտեղ Վ-ն ծառայության դիմաց գանձվող վճարի մեծությունն է, Ծ$_գ$-ն տվյալ գործարքի իրականացման հետ կապված ծախսերի մեծությունն է, որը իր մեջ կարող է ներառել կարգավորվող շուկայի օպերատորի, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի այլ պահառուի և(կամ) ռեեստրավարի կողմից գանձվող գումարները, ինչպես նաև գործարքի իրականացման հետ կապված ցանկացած այլ ծախսեր, Հ-ն Ընկերության կողմից կիրառվող հավելագինն է, որը յուրաքանչյուր գործարքի դեպքում սահմանվում է հաճախորդի հետ բանակցությունների արդյունքում` ղեկավարվելով սույն կանոնի (ա) կետում նշված սկզբունքներով:

18.3. Սույն կանոնի 18.2. կետում նշված մեծությունները կարող են ունենալ ինչպես տոկոսային, այնպես էլ բացարձակ արտահայտություն:

18.4. Բրոքերի կողմից միջազգային շուկաներում բրոքերային գործառնությունների կատարման համար սահմանված սակագները չեն ներառում Բրոքերի Գործակալ չհանդիսացող այլ անձանց (ԱՀ-ներ, բորսաներ, պահառուներ և այլն) կողմից գանձվող վճարները (բացառությամբ քլիրինգային վճարների), որոնք, ի հայտ գալու դեպքում, գանձվում են Հաճախորդի Միջոցներից: Հաճախորդի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում Բրոքերը տրամադրում է այն աղբյուրները, որտեղից կարելի է տեղեկություններ ստանալ նշված վճարների վերաբերյալ:

18.5. Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը կարող է իր որոշմամբ սահմանել Ընկերության Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների մեծության սանդղակ:

18.6. Բրոքերն իր կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների միջոցով իրականացրած արժեթղթերով գործարքներից և/կամ այդպիսի արժեթղթերով ստացված եկամուտներից գոյացող հարկային պարտավորությունների գծով հարկային գործակալ չի հանդիսանում և չի տրամադրում դրանց գծով հարկային խորհրդատվություն: Հաճախորդը սույնով հաստատում է, որ պատշաճ տեղեկացված է և համաձայն է, որ Հաճախորդն է կրում սույն կետում նշված իր հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը: Ընդ որում, ՀՀ տարածքում թողարկված պարտատոմսերից ստացված արժեկտրոնային եկամուտներից գոյացած հարկային պարտավորությունների հարկային գործակալ է հանդիսանում թողարկողը (իսկ Բրոքերի կողմից թողարկված լինելու դեպքում՝ Բրոքերը)՝ ՀՀ օրենսդրության կարգավորումներին համապատասխան: Բրոքերը պատասխանատվություն չի կրում ցանկացած և բոլոր դեպքերում, երբ Հաճախորդին ՀՀ տարածքից դուրս թողարկված (արտասահմանյան) արժեթղթերից եկամուտները համապատասխան արժեթղթերի թողարկողների կողմից վճարվել են կամ վճարվելու են նման եկամուտների մասով կատարված/կատարման ենթակա հարկային վճարների նվազեցմամբ:

## 19. Ընկերության և հաճախորդների, ինչպես նաև Ընկերության տարբեր հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը

19.1. Այն դեպքում, երբ Ընկերությունը հիմնավոր փաստերի հիման վրա հանգում է այն եզրակացությանը, որ իր և Հաճախորդի կամ տարբեր հաճախորդների միջև հաճախորդների Պատվերների կատարման

ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան Հաճախորդի Պատվերի կատարման պահը, Հաճախորդին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ:

19.2. Եթե Հաճախորդը հրաժարվում է օգտագործել Ընկերության կողմից իրեն առաջարկված շահերի բախումից խուսափելու եղանակները, իսկ շահերի բախումը կարող է առաջանալ Ընկերության տարբեր Հաճախորդների միջև, ապա Ընկերությունը Հաճախորդների Պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հաջորդականության, անկախ այն բանից, որ դրա արդյունքում Հաճախորդներից որևէ մեկը կարող է տուժել: Այդ դեպքում համարվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով Պատվերը կատարելու համար:

19.3. Եթե շահերի բախումը առաջանում է Ընկերության և Հաճախորդի միջև, ապա Ընկերությունը Հաճախորդի Պատվերը կատարում է այնպես, որպեսզի դրա արդյունքում տուժի ոչ թե Հաճախորդը, այլ Ընկերությունը:

## 20. Հաճախորդի հետ կապ հաստատելու կարգը

20.1. Պայմանագրով Կողմերի միջև ցանկացած Գործարքի և Պատվերի ներկայացում, փոխանցում, փոխանակում, պայմաններ և ծառայությունների մատուցում, ինչպես նաև ցանկացած տեղեկատվություն (ներառյալ հաղորդագրություններ, փաստաթղթեր, ծանուցումներ, քաղվածքներ, հաշվետվություններ), ներառյալ ցանկացած պահանջների կամ այլ պահանջների հետ կապված ցանկացած հաղորդակցություն, Պայմանագրից/պայմաններից բխող հարցերը (այսուհետ՝ նաև ծանուցում) իրականացվում է էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային հասցեի և/կամ INVIA հարթակի միջոցով և/կամ Հաճախորդի կողմից Բրոքերին տրամադրված տեղեկատվությունը փոխանցման հուսալի եղանակով, եթե Պայմանագրում/պայմաններում այլ պարտադիր պայման նախատեսված չէ:

20.2. Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված, երբ ծանուցումն ուղարկվել է Պայմանագրում նշված էլ. հասցեին, նույնիսկ եթե չկա ընթերցման ապացույց: Այս դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը ստանալու հաջորդ օրը: Որպես Պայմանագրով/պայմաններով նախատեսված ծառայությունների մատուցման մաս, բոլոր ծանուցումները Բրոքերին ուղարկվում են էլեկտրոնային փոստի և/կամ INVIA հարթակի և/կամ հաղորդակցության հուսալի միջոցի միջոցով:

20.3. Որպես Պայմանագրի, պայմանների և ծառայությունների մատուցման մաս, կողմերի միջև տեղեկատվության փոխանակումը, հաղորդակցությունը և/կամ Պատվերների ներկայացումը կարող է իրականացվել նաև Բրոքերի գրասենյակում փաստաթղթերի/տեղեկատվության բնօրինակները փոխանցելու/ստանալու միջոցով: Ծառայությունների մատուցման մասին տեղեկատվության հրապարակումը կարող է իրականացվել նաև Բրոքերի պաշտոնական կայքում տեղեկատվություն տեղադրելու միջոցով:

20.4. Հաճախորդը սույնով տեղեկացվում է, ընդունում և համաձայնում է, որ ուղարկել/փոխանցել և/կամ ստացել/ուղարկել է տեղեկատվություն և/կամ հաղորդագրություններ և/կամ փաստաթղթեր և/կամ հրահանգներ պայմանների սույն գլխում նշված և/կամ որոշված հաղորդակցման եղանակներից որևէ մեկով:

20.5. Ցանկացած պատվեր, առաջարկ կամ այլ փաստաթուղթ, որն ուղարկվում է սույն Կողմերից մեկի էլեկտրոնային փոստով մյուս Կողմին և/կամ INVIA հարթակի միջոցով և/կամ փոխանցման հուսալի միջոցներով ուղարկելով, համարվում է լիովին վավեր իրավական փաստաթուղթ:

20.6. Կողմերը պարտավոր են անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին, եթե փոխվի Պայմանագրում նշված փոստային կամ էլ. փոստի հասցեն: Հասցեի փոփոխության մասին մյուս Կողմին չտեղեկացնելու հետևանքները կրում է չծանուցող Կողմը:

20.7. Հաճախորդի համար Պայմանագրում համաձայնեցված/սահմանված հաղորդակցության եղանակը կարող է փոփոխվել Հաճախորդի կողմից ներկայացված հուսալի կապի միջոցով ներկայացված դիմումի համաձայն:

20.8. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները և համապատասխան վերահսկողությունը՝ չլիազորված անձանց կողմից իրենց էլ. հասցեներին կամ կապի այլ միջոցներին և/կամ նույնականացման համարին մուտքը կանխելու համար: Բոլոր դեպքերում, բոլոր իրավական ռիսկերն ու հետևանքները, որոնք բխում են կապի և/կամ անձնական ծածկագրի չարտոնված մուտքից կամ անօրինական մուտքից (ներառյալ իրավասության կամ իրավասության սահմանները գերազանցելու վտանգը) կրում է համապատասխան Կողմը:

## 21. Կողմերի պատասխանատվություն

21.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

21.2. Կողմերը պատասխանատվություն են կրում Կանոնների 7-րդ գլխում նշված իրենց երաշխիքների և հավաստումների ճշգրտության համար և պարտավոր են մյուս կողմին հատուցել նման երաշխիքները և հավաստումները չկատարելու հետևանքով պատճառված վնասը: Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն Կանոններով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դրա պատճառը մյուս կողմի կողմից Կանոնների 7-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստումների չկատարումն է: Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է փոխհատուցել երրորդ անձին պատճառված վնասը, եթե նման վնասի պատճառներից մեկը Կանոնների 7-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստումների չկատարումն է:

21.3. Բրոքերը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ Գործակալների (ենթալիազորված անձանց) կողմից, որոնք ներգրավված են Բրոքերի կողմից գործարքների կնքման գործընթացում և/կամ պահառուների կողմից ընտրված անձանց՝ Հաճախորդի միջոցները հաշվառելու, կոնտրագենտի անվճարունակության կամ սնանկության համար:

21.4. Գործարքներով, այդ թվում՝ Արժեթղթերի փոխանցման հանձնարարականներով՝ Հաճախորդին պատճառված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով, եթե նա չգիտեր և չէր կարող իմանալ դրա առկայության կամ անխուսափելիության մասին. այս հանգամանքները վերջինիս հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելիս:

21.5. Հաճախորդի Պատվերով կատարված գործարքներով մյուս Կողմի կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը կրում է Հաճախորդը, և Բրոքերը հավաստում է, որ նա ամեն ջանք կգործադրի պատշաճ կատարում պահանջելու համար, սակայն սույնով երաշխիքներ չի տալիս և անում է. նույնի հետ կապված որևէ պարտավորություն չստանձնել: Կողմերը սույնով հավաստում են, որ հաշվի առնելով այն փաստը, որ Պատվերների կատարումը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետությունից դուրս՝ կարգավորվող շուկաներում, հիմնականում Գործակալների և հաջորդաբար նրանց ենթագենտների շղթայի միջոցով, ինչպես նաև այնպիսի Գործակալների և ենթագենտների, որոնք Բրոքերը փոխանցում է միայն. /Հաղորդում է Հաճախորդի Պատվերների մասին Գործակալներին, որոնք, իրենց հերթին, կարող են նաև դրանք փոխանցել ենթագենտներին

կատարման համար, մինչդեռ Բրոքերը հնարավորություն չունի ընտրել այդպիսի ենթագենտներ նման պայմաններով իր հայեցողությամբ, Բրոքերը ազատված է պատասխանատվությունից: Պատվերի հիման վրա կնքված Գործարքներով երրորդ անձանց կողմից իր պարտավորությունները չկատարելը: Կողմերը սույնով համաձայնում են, որ Բրոքերը կհամարվի, որ չի ցուցաբերել պատշաճ ջանասիրություն միայն այն դեպքում, եթե հնարավորություն ունենալով ընտրել/հնարավորություն է ունեցել ընտրել Պատվերներ կատարող կամ փոխանցող Գործակալներ, նա գիտեր սնանկության/անվճարունակության կամ դրա մոտալուտ լինելու մասին:

21.6. Բրոքերը պատասխանատվություն չի կրում ԱՀ-ի գործողությունների կամ անգործության, ինչպես նաև Հաճախորդի միջոցներով վերջնական հաշվարկային գործարքի մասնակիցների կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարման համար, անկախ դրա պատճառներից, ինչպես նաև ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների համար (այդ թվում՝ համակարգերի միջոցով Հաճախորդին ծառայությունների մատուցման և համակարգի տեխնիկական խափանումների դեպքում) հաճախորդին պատճառված վնասի համար, եթե ապացուցված չէ, որ նման խափանումներն ու վնասները առաջացել են Բրոքերի դիտավորյալ գործողությունների հետևանքով:

21.7. Բրոքերը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած վնասների համար, որոնք առաջանում են Բրոքերի կողմից Պատվերներ կատարելու կամ փոխանցելու փաստացի անհնարինության դեպքում՝ ցանկացած հանգամանքների պատճառով (ներառյալ այն հանգամանքները, որոնք չեն գտնվում Բրոքերի բացառիկ, լիարժեք և ամբողջական վերահսկողության ներքո) և կապված են երրորդ անձանց և արտաքին միջավայրի հետ:

21.8. Ամեն դեպքում, Բրոքերի պատասխանատվությունը Հաճախորդի նկատմամբ սահմանափակվում է դիտավորյալ կամ ակնհայտ անփութության, Պատվերի խախտմամբ գործարքներ կնքելու և Հանձնարարականը չկատարելու դեպքերով՝ սույն Կանոններով սահմանված համապատասխան իրավական հիմքերի և իրեն պատճառված փաստացի վնասի չափի բացակայության դեպքում:

21.9. Հաճախորդը պարտավորվում է փոխհատուցել Բրոքերին ցանկացած վնաս, որը առաջանում է երրորդ անձանց կողմից Բրոքերին ներկայացված պահանջների կատարման արդյունքում՝ որպես Բրոքերի կողմից Հաճախորդին ծառայությունների մատուցման մաս՝ համաձայն Պայմանագրի և սույն Կանոնների: Հաճախորդը ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջները հիմնված են եղել Բրոքերի գործողությունների վրա, ներառյալ՝ Անօրինական գործողությունները, որոնք նախատեսված չեն Պատվերով:

21.10. Կնքված Գործարքով Հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ուշացնելու դեպքում Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդից պահանջել փոխհատուցում դրա հետևանքով Ընկերության կրած փաստացի վնասների համար:

21.11. Ընկերության միջնորդավճարները չվճարելու կամ ժամանակին վճարելու դեպքում Հաճախորդը Ընկերությանը վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0,13%-ի չափով յուրաքանչյուր ուշացման օրվա համար, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10%-ը:

21.12. Ընկերության մեղքով վճարումների ուշացման, Արժեթղթերի առաքման կամ փոխանակման միջնորդավճարների վճարման հետևանքով առաջացած բոլոր տուգանքները վճարվում են Ընկերության կողմից:

21.13. Մինչև Գործարքի վերջնահաշվարկի պահը Հաճախորդի կողմից Պատվերի հիման վրա Ընկերության կողմից կնքված Գործարքից հրաժարվելու դեպքում, վերջինս Ընկերությանը վճարում է տուգանք Պատվերում նշված Ընկերության կրած վնասի չափով՝ Նշված Գործարքի գումարի առնվազն 5% - ի չափով:

21.14. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից նշված արժեթղթերի առաջարկի/պահանջարկի բացակայության պատճառով վաճառքի/գնման պատվերի չկատարման կամ մասնակի կատարման համար:

## 22. Վեճերի լուծման կարգը

22.1. Բրոքերի և Հաճախորդի միջև Պայմանագրի և (կամ) Կանոնների կատարման հետ կապված ծագած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանների կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 23. Պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագրի դադարեցումը, ներառյալ Հաճախորդի՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ ծանուցելու պայմանով

23.1. Սույն Կանոնները Հաճախորդի համար ուժի մեջ են մտնում սույն Կանոնների 3-րդ կետին համապատասխան Պայմանագրի/առաջարկի ընդունման պահից և և գործում են մինչև դրա դադարեցումը սույն Կանոններով սահմանված հիմքերով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում Պայմանագիրը շարունակում է գործել մինչև Պայմանագրի Կողմերի կողմից այդ պարտավորությունների շրջանակներում ստանձնած պարտավորությունների և պարտականությունների լիարժեք և պատշաճ կատարումը:

23.2. Պայմանագիրը կարող է դադարեցվել Ընկերության և Հաճախորդի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին ծանուցելու պայմանով առնվազն 10 օր առաջ:

23.3. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրով, որը դառնում է Պայմանագրի անբաժանելի մասը, բացառությամբ Ընկերության կողմից միակողմանիորեն իրականացվող սակագների և Կանոնների փոփոխությունների և լրացումների: Ընկերության կողմից Հաճախորդի համար միակողմանիորեն կատարված փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում նման փոփոխությունների և լրացումների մասին Հաճախորդին գրավոր ծանուցում ուղարկելու օրվանից 20 օր հետո:

Հարկադիր փակումը կարող է առաջանալ նաև քլիրինգային կազմակերպության կողմից հաշվարկված և (կամ) բրոքերի կողմից օգտագործվող ռիսկի տոկոսադրույքների արժեքների փոփոխության պատճառով' կապված համապատասխան արժեթղթերի անկայունության բարձրացման հետ: Նշված բոլոր դեպքերում դիրքի հարկադիր փակումը կարող է զգալի վնասներ պատճառել հաճախորդին, չնայած այն հանգամանքին, որ դիրքի փակումից հետո ֆինանսական գործիքների գների փոփոխությունը կարող է բարենպաստ ուղղություն վերցնել հաճախորդի համար, և հաճախորդը եկամուտ կստանար, եթե հաճախորդի դիրքը չփակվեր:

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ
ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Նշված վնասների չափը հանգամանքների անբարենպաստ համադրության դեպքում կարող է գերազանցել հաճախորդի պորտֆելում/ենթապորտֆելում գտնվող ակտիվների արժեքը:

II. Իրացվելիության ռիսկ

Եթե առանձին արժեթղթերի գծով չբացված դիրքի մեծությունը նշանակալի է ազատ շրջանառության մեջ գտնվող համապատասխան արժեթղթերի ծավալի և (կամ) կազմակերպված շուկայում առևտրի ծավալի համեմատությամբ, ապա մարժային և (կամ) չբացված գործարքի կատարման ժամանակ իրացվելիության ռիսկը մեծանում է: Ակտիվների ձեռքբերման կամ վաճառքի հետ կապված դժվարությունները կարող են հանգեցնել կորուստների ավելացման ՝ համեմատած սովորական գործարքների հետ: Է հաշվի առնել իրացվելիության աճող ռիսկը, եթե հաճախորդի չբացահայտված դիրքի ապահովումը արժեթղթեր են, և չբացահայտված դիրքի փակման համար կարող է պահանջվել արժեթղթերի զգալի քանակի իրացում: Եթե հաճախորդի կողմից չբացահայտված դիրքի ապահովումն Ապահովված է արժեթղթերով, ապա պետք է հաշվի առնել իրացվելիության ռիսկը:

Կորուստների սահմանափակմանն ուղղված Հաճախորդի հանձնարարականները միշտ չէ, որ կարող են սահմանափակել կորուստները մինչև ակնկալվող մակարդակը, քանի որ շուկայում ստեղծված իրավիճակի շրջանակներում հաճախորդի կողմից նշված գնով նման հանձնարարականի կատարումը կարող է անհնարին լինել:

Մարժայով, լևերիջով գործարքները, այդ թվում՝ լևերիջով ֆորեքս գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, և այս գործարքների կնքումը համապատասխանում է միայն այն հաճախորդներին, որոնք պատրաստ են գնալ ռիսկի՝ կորցնելու իրենց կողմից նախապես ներդրված ապահովվածության գումարը (մարժան): Գիտակցում եմ նաև, որ այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում Հաճախորդը կորող իր ներդրման համեմատ ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել:

- Օտարերկրյա արժեթղթեր

Սույն հայտարարագրի նպատակներով օտարերկրյա արժեթղթերը հասկացվում են որպես օտարերկրյա թողարկողների արժեթղթեր, ինչպես նաև օտարերկրյա թողարկողների արժեթղթեր, որոնք որակվում են որպես պարտատոմսեր և անվանական արժույթով, որը պարտատոմսերի թողարկողի համար արտարժույթ է (եվրապարտատոմսեր):

Օտարերկրյա արժեթղթերով գործառնությունները բնորոշ են արժեթղթերի շուկայում գործառնությունների հետ կապված ընդհանուր ռիսկերին ' հետևյալ հատկանիշներով:

Համակարգային ռիսկեր

Շատ գործոններ կարող են ազդել համակարգային ռիսկի մակարդակի վրա, ներառյալ տնտեսության առանձին ճյուղերում ներդրումների վրա սահմանափակումներ մտցնելու

հավանականությունը կամ ազգային արժույթի միաժամանակյա արժեզրկման հավանականությունը: Օտարերկրյա արժեթղթում ներդրումների համակարգային ռիսկի համընդհանուր ընդունված ինտեգրալ գնահատականը" սուվերեն վարկանիշն "է արտարժույթով կամ ազգային արժույթով, որը շնորհվել է այն երկրին, որտեղ գրանցված է թողարկողը Moody' S, STANDARD & Poor ' S, Fitch IBCA միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից, սակայն պետք է նկատի ունենալ, որ վարկանիշները միայն ուղենիշներ են և կարող են կոնկրետ պահին չհամապատասխանել իրական իրավիճակին:
Օտարերկրյա դեպոզիտար ստացականներով գործարքներ կատարելու դեպքում, բացի ստացականների թողարկողի հետ կապված ռիսկերից, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ ստացականներով ներկայացված օտարերկրյա արժեթղթերի թողարկողի հետ կապված ռիսկերը:

Իրավական ռիսկեր

Օտարերկրյա արժեթղթեր ձեռք բերելիս անհրաժեշտ է տեղյակ լինել, որ դրանք միշտ չէ, որ ՀՀ օրենսդրության համաձայն արժեթղթերի անալոգներ են (հայկական թողարկողների արժեթղթեր): Ամեն դեպքում, նրանց կողմից տրամադրված իրավունքներն ու դրանց իրականացման կանոնները կարող են էապես տարբերվել ՀՀ օրենսդրությունից:
Օտարերկրյա արժեթղթերի նկատմամբ իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունները կարող են զգալիորեն սահմանափակվել օտարերկրյա դատական և իրավապահ մարմիններին դիմելու անհրաժեշտությամբ 'սահմանված կանոնների համաձայն, որոնք կարող են էապես տարբերվել ՀՀ օրենսդրությունից:: Բացի այդ, օտարերկրյա արժեթղթերով գործարքների ժամանակ հաճախորդը շատ դեպքերում չի կարողանա ապավինել ՀՀ լիազոր մարմինների կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Բացահայտում

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս օտարերկրյա արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում համաձայն արտերկրում գործող կանոնների և օտար լեզվով, ներառյալ անգլերենով: Հաճախորդը պետք է գնահատի տեղեկատվությունը օտար լեզվով վերլուծելու իր պատրաստակամությունը, ինչպես նաև այն, թե արդյոք հաճախորդը հասկանում է ՀՀ-ում ընդունված ֆինանսական հաշվետվությունների կանոնների, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ ֆինանսական հաշվետվությունների կանոնների միջև եղած տարբերությունները, որոնց համար տեղեկատվությունը հրապարակվում է օտարերկրյա արժեթղթերի թողարկողի կողմից:
Նաև բրոքերները կարող են թարգմանել որոշ փաստաթղթեր (տեղեկատվություն), որոնք բացահայտվում են օտարերկրյա թողարկողի կողմից հաճախորդի հարմարության համար: Այս դեպքում թարգմանությունը կարող է ընկալվել բացառապես որպես օտար լեզվով պաշտոնապես բացահայտված փաստաթղթերի (տեղեկատվության) օժանդակ

# ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 1. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ

1. Ընկերության կողմից ներդրումային ծառայություններ մատուցելիս առաջացող հնարավոր շահերի բախումների տեսակները հետևյալն են՝
1) Հաճախորդի հետ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքում շուկայականից տարբերվող գներով՝ ի օգուտ Ընկերության կամ դրա աշխատակցի և ի վնաս Հաճախորդի,
2) Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Ընկերությանը, Ընկերության աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
3) Հաճախորդին պատկանող միջոցների ներդրում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
4) Հաճախորդի միջոցների հաշվին ավելորդ կամ վերջինիս շահերին չհամապատասխանող գործարքների իրականացում, որը նպատակ է հետապնդում մեծ ծավալներով միջնորդավճարների գանձում հաճախորդից,
5) Հաճախորդի կողմից տրամադրված ծառայողական տեղեկությունների օգտագործումը ի օգուտ Ընկերության, Ընկերության աշխատակցի կամ այլ փոխկապակցված անձի, ի վնաս հաճախորդի.
6) Արժեթղթերով այնպիսի գործարքների իրականացումը, որոնք կարող են լինել ի շահ մեկ հաճախորդի և ի վնաս մեկ այլ հաճախորդի,
2. Նշված հնարավոր շահերի բախումների ցանկը սպառիչ և ամբողջական չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել շահերի բախումների նաև այլ դեպքերով:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼԻՍ

3. Շահերի հնարավոր բախումները կանխարգելելու նպատակով Ընկերությունը կիրառում է հետևյալ միջոցառումները՝
1) Ընկերության աշխատակիցը հաճախորդների գործարքները կնքում է հաճախորդի կողմից ներկայացված համապատասխան պատվերի հիման վրա՝ պատշաճ ձևակերպված,
2) Խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:
4. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Ընկերությունը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Այդ նպատակով Ընկերության համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

1) Պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Ընկերության ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,
2) Չիրականացնել հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնք արդյունքում կհանգեցնեն վերջինից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացմանը,
3) Գործել ազնիվ և բարեխիղճ:
5. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Ընկերությունը և համապատասխան աշխատակիցը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան Հաճախորդի այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ ներդրումային ծառայության մատուցող անձի կողմից դրանց ստացման հաջորդականության:
6. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Ընկերությունը և համապատասխան աշխատակիցը պետք է.
1) Համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
2) Այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,
3) Համապատասխան Հաճախորդի պատվերի առկայության դեպքում Ընկերությունը խուսափում է պատվերի առարկա գործարքին նույնական գործարք իրականացնելուց նախքան Հաճախորդի պատվերի կատարումը,
4) Հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Լևերիջով գործարքների, այդ թվում՝ Ֆորեքս գործարքների ռիսկայնության տեղեկացվածության վերաբերյալ**

Ես՝ -------------------------------------------------------------------------------------------------------------------------,

*անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անունը, ազգանունը, հայրանունը)*

տեղյակ եմ, որ Լևերիջով գործարքները, այդ թվում՝ Ֆորեքս գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, և այս գործարքների կնքումը համապատասխանում է միայն այն հաճախորդներին, որոնք պատրաստ են կորցնել իրենց կողմից նախապես ներդրված ապահովվածության գումարը (մարժան): Գիտակցում եմ նաև, որ այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում կարող եմ ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել:

______________________ «___» ___________ 202_ թ.

(ստորագրություն)

Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից
Approved by the Annual General Meeting of Shareholders of
Invia Investments CJSC on 19/06/2025
Հավելված 11/Appendix 11
Ուժի մեջ է/In force 14.07.2025

# Բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագիր
Application-agreement for opening a brokerage/depo account

Սույն Հայտ-պայմանագիրը՝ (այսուհետ՝ «Պայմանագիր») կարգավորում է մի կողմից «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի, (այսուհետ՝ «Ընկերություն» «Բրոքեր») և մյուս կողմից Պայմանագիրը ստորագրած/հաստատած անձի (այսուհետ՝ «Հաճախորդ») միասին այսուհետ «Կողմեր» ՀՀ օրենսդրությանը, Ընկերության կանոնադրությանը, ներքին կանոններին համապատասխան ներդրումային ծառայությունների մատուցումը:
This Application agreement (hereinafter: "Agreement") regulates "Invia Investments" CJSC, on the one hand (hereinafter: "Company", "Broker") and ________________________________________ (hereinafter: "the Client"), on the other hand, together, hereinafter "Parties" provision of Investments services in accordance with RA legislation, the Company's charter, internal rules.

Սույն Պայմանագիրը իմ կողմից էլեկտրոնային եղանակով հաստատելով ընդունում և հավաստիացնում եմ, որ:

By electronically confirming this Agreement, I acknowledge, confirm and certify that:

1. Ծանոթացել եմ և միանում եմ Բրոքերային հաշվի բացման սույն Պայմանագրին, դրա անբաժանելի մասը կազմող Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններին Ընկերության պաշտոնական կայքէջում տեղադրված (https://inviabroker.com) սակագներին և պայմաններին (այսուհետ նշված պայմանները և սակագները միասին՝ «Պայմաններ»), հայտարարագրերին, տեղեկացումներին, զգուշացումներին ինչպես նաեւ Ընկերության ռիսկերի հայտարարագրին, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկություններին, Հաճախորդի հաշիվներն էլեկտրոնային եղանակով և էլեկտրոնային ստորագրության օգտագործման և էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման համար» բացման և վարման կարգը կարգավորող կանոններին: Սույնով հայտնում եմ, որ, վերջիններիս բովանդակությունը ինձ լիարժեք հասկանալի է, չկա լրացուցիչ պարզաբանելու/բացատրելու անհրաժեշտություն, լիարժեք գիտակցում ու անվերապահորեն հաստատում եմ Պայմանագրի բովանդակությունն ու Պայմանները՝ վերահաստատելով Պայմաններով սահմանված իմ համաձայնությունները, երաշխիքները եւ հավաստիացումները և համաձայն Պայմանների Ընկերության հետ ձևավորում եմ պայմանագրային հարաբերություններ:

   I have familiarized myself with and agree to this Agreement for opening a Brokerage account, the provisions of the brokerage Agreement that are an integral part of it, and all the rules, tariffs, and conditions posted on the official website of the Company

https://inviabroker.com (hereinafter the terms and tariffs together, the "Terms and Conditions") declarations, notifications, warnings, risk disclosures, and information from Regulation 4/07 by the Central Bank of the Republic of Armenia, the rules governing the procedure for opening and maintaining of “client accounts in electronic form and on the use of electronic signatures and the exchange of electronic documents”. I hereby state that the content of the latter is fully understandable to me, there is no need for additional clarification/explanation, I fully understand and unconditionally confirm the content of the Agreement and the Terms, reaffirming my agreements, guarantees, and assurances presented by the Terms.

2. Ծանոթացել եմ և միանում եմ Ընկերության կայքում տեղադրված Արժեթղթերի հաշվի բացման (պահառության ծառայությունների մատուցման) պայմանագրին (այսուհետ՝ «Դեպո պայմանագիր») և դրա անբաժանելի մասը կազմող Պայմանագրի պայմանները կարգավորող Պահառուական ծառայությունների մատուցման կանոններին (այսուհետ՝ «Դեպո կանոններ») և սակագներին, անվերապահորեն հաստատում եմ այդ պայմանագրի բովանդակությունն ու պայմանները՝ վերահաստատելով Դեպո պայմաններով ներկայացված իմ համաձայնությունները, երաշխիքները և հավաստիացումները և համաձայն Դեպո Պայմանագրի և Դեպո կանոնների Ընկերության հետ ձևավորում եմ պայմանագրային հարաբերություններ:

   I have familiarized myself with and agree to the Securities account opening (custodial services provision) Agreement published on the website https://inviabroker.com/account-opening/ (hereinafter referred to as the “Custodial Agreement”) and the Custody Service Tariffs regulating the terms of the Agreement (hereinafter referred to as the “Custodial terms”), which are an integral part of it, I unconditionally confirm the content and conditions of that Agreement, reaffirming my agreements, guarantees, and assurances presented in the Custodial terms and conditions and forming a contractual relationship with the Company in accordance with the Custodial Agreement and Terms.

3. Պայմանագրում արտացոլված տեղեկատվությունը լիարժեք է և ամբողջությամբ համապատասխանում է իրականությանը:

   The information reflected in the Agreement is complete and fully corresponds to reality.

4. Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որ Ընկերությունը կարող է օգտագործել իր մոտ համապատասխան հաշիվներում հաշվառվող և ինձ պատկանող արժեթղթերը և/կամ դրամական միջոցները ի շահ իրեն՝ ՀՀ Կենտրոնական բանկի 4/12 Կանոնակարգի պայմանների պահպանմամբ: Վերջիններս ենթակա են

վերադարձման նրա կողմից ներկայացված պահանջի դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

I hereby give my consent that the Company can use securities and/or financial means held in its accounts that are mine for its advantage, as per the guidelines set in Regulation 4/12 of the Central Bank of RA. The latter will be returned upon his request within the specified terms set by the RA legislation

5. Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որ Ընկերությունը կարող է իր մոտ համապատասխան հաշիվներում հաշվառվող ինձ պատկանող արժեթղթերով կնքել ռեպո գործարքներ, ինչպես նաև գրավադրել դրանք համաձայն Պայմանների:

   I hereby give my consent that the Company may enter into repo transactions with the securities owned by me recorded in the relevant accounts with it, as well as pledge them without violating its fiduciary duties towards the Client according to the Rules.

6. Սույնով ես իմ համաձայնությունն եմ տալիս, որ ծանոթացել է Բրոքերային (դիլերային) գործունեության կանոնների անբաժանելի մաս հանդիսացող բոլոր Հավելվածների բովանդակությանը և միանում է դրանց: Սույնով անձը հայտնում եմ որ, վերջիններիս բովանդակությունը լիարժեք հասկանալի է, չկա լրացուցիչ պարզաբանելու/բացատրելու անհրաժեշտություն:

   I have familiarised myself with and agree with the contents of all applications that are an integral part of the rules of brokerage (dealer) activity, and join them. I hereby state that the content of the latter is fully understandable to me, there is no need for additional clarification/explanation.

7. Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ երկրների օրենսդրությամբ, Ընկերության Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային պատժամիջոցների պահպանման դեմ պայքարի ընթացակարգի, Պատժամիջոցների պահպանման քաղաքականության, ինչպես նաև Ընկերության այլ ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում, իր հայեցողությամբ, կարող է դադարեցնել ինձ հետ պայմանագրային հարաբերությունները, արգելափակել իմ բրոքերային հաշիվը և/կամ սառեցնել ակտիվները:

   I hereby give my consent that, in cases prescribed by the legislation of the Republic of Armenia or other countries, as well as by the Company's procedures for combating money

laundering, terrorist financing, and international sanctions compliance, its Sanctions Compliance Policy, and other internal legal acts, the Company, at its sole discretion, may terminate its contractual relationship with me, block my brokerage account, and/or freeze my assets.

8. Սույնով հաստատում եմ, որ Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում գործարք կնքելու նպատակով օգտագործվող իմ արժեթղթերը եւ/կամ դրամական միջոցները ստացվել են օրինական ճանապարհով, ծանրաբեռնված չեն երրորդ անձանց իրավունքներով, չեն ստացվել հանցավոր գործունեության արդյունքում, ներառյալ, սակայն չսահմանափակվելով փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու եւ այլ: Միաժամանակ, տալիս եմ իմ համաձայնությունը՝ Ընկերության կողմից իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք անհրաժեշտ են համարվում համաձայն ահաբեկչության ֆինանսավորման եւ փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրական կարգավորումների և Ընկերության ներքին իրավական ակտերի: Ընկերությունը հաշվի բացումն արգելող հիմքերի բացակայության դեպքում միայն պետք է բացի/ակտիվացնի նշված հաշիվ(ներ)ը և օգտահաշիվը:

   I affirm that the securities and/or financial means used by the Company in executing transactions within the Agreement were obtained legally, free from any third-party claims, and were not acquired through illegal means, including but not limited to activities such as money laundering, terrorist financing, drug trafficking, human trafficking, tax evasion, or similar activities. I hereby provide consent for the Company to conduct any necessary actions as required by legislative regulations to combat money laundering and terrorist financing, by the Company's internal policies. The Company will proceed with opening/activating the specified account(s) and user account only if there are no grounds prohibiting the account's establishment.

9. Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որպեսզի ՀՀ հարկային օրենսգրքի գլուխ 80.2-ով սահմանված դեպքերում և կարգով իմ և իմ հաշիվների վերաբերյալ Ընկերության կողմից տեղեկություններ տրամադրվեն ՀՀ հարկային մարմնին: Միաժամանակ պարտավորվում եմ տրամադրել իմ հարկային ռեզիդենտության վերաբերյալ ամբողջական, ճշգրիտ և հավաստի տեղեկություններ, ինչպես նաև տեղեկությունների փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել Ընկերությանը: Պայմանագրի ստորագրմամբ տալիս եմ իմ համաձայնությունը, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգների օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտով սահմանված դեպքերում և կարգով իմ և իր հաշիվների վերաբերյալ Ընկերության կողմից տեղեկություններ տրամադրվեն ԱՄՆ ներքին եկամուտների ծառայությանը:

I hereby confirm my consent for the Company to provide information about me and my accounts to the tax authorities of the Republic of Armenia, in the cases and manner prescribed by Chapter 80.2 of the Tax Code of the Republic of Armenia. At the same time, I undertake to provide complete, accurate, and reliable information about my tax residency and to notify the Company of any changes to this information. By signing this Agreement, I also confirm my consent for the Company to provide information about me and my accounts to the U.S. Internal Revenue Service in the cases and manner prescribed by the Foreign Account Tax Compliance Act (FATCA) of the United States of America.

10. Այն դեպքում, երբ Հաճախորդը նախընտրում է ունենալ սույն Պայմանագրի ստորագրված պատճենը, ապա Հաճախորդը կարող է դրանք տպել, ստորագրել երկու օրինակից և ուղարկել Ընկերությանը՝ նշելով իր փոստային հասցեն: Պայմանագրի պատշաճ ստորագրված և Ընկերության կողմից կնիքով վավերացված երկրորդ օրինակը կուղարկվի Հաճախորդի կողմից նշված փոստային հասցեին:

    If the client prefers to have a signed copy of this Agreement, the client can print them out, sign them in two copies and send them to the company, specifying his postal address. The second copy of the contract, duly signed and stamped by the company, will be sent to the postal address specified by the client.

11. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, տարընթերցումների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:
    This Agreement is drawn up in Armenian and English languages. In the event of any discrepancies or inconsistencies between the two versions, the Armenian version shall prevail.

Հաճախորդ
Client

| Անուն, ազգանուն<br>Name, surname | Ստորագրություն<br>Signature |
|---|---|

Ամսաթիվ
Date

Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից
Approved by the Annual General Meeting of Shareholders of
Invia Investments CJSC on 19/06/2025
Հավելված 12/Appendix 12
Ուժի մեջ է/In force 14.07.2025

# Բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագիր
## Application-agreement for opening a brokerage/depo account

Սույն Հայտ-պայմանագիրը՝ (այսուհետ՝ «Պայմանագիր») կարգավորում է մի կողմից «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի, (այսուհետ՝ «Ընկերություն» «Բրոքեր») ի դեմս գործադիր տնօրեն Անահիտ Շաքարյանին և մյուս կողմից Պայմանագիրը ստորագրած/հաստատած իրավաբանական անձի (այսուհետ՝ «Հաճախորդ») միասին այսուհետ «Կողմեր» ՀՀ օրենսդրությանը, Ընկերության կանոնադրությանը, ներքին կանոններին համապատասխան ներդրումային ծառայությունների մատուցումը:
This Application agreement (hereinafter: "Agreement") regulates "Invia Investments" CJSC, on the one hand (hereinafter: "Company", "Broker") and ______________________________ (hereinafter: "the Client"), on the other hand, together, hereinafter "Parties" provision of Investments services in accordance with RA legislation, the Company's charter, internal rules.

Սույն Պայմանագիրը իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը էլեկտրոնային եղանակով հաստատելով ընդունում և հավաստիացնում է, որ.
By accepting, confirming and certifying this agreement in electronic form by the executive body of the legal entity, we guarantee that:

1. Հաճախորդը սույնով հավաստիացնում, որ իր անունից սույն Պայմանագիրը կնքող անձը պատշաճ կերպով լիազորված է և ունի բոլոր անհրաժեշտ կորպորատիվ կամ կազմակերպչական հաստատումները՝ սույն Պայմանագիրը կնքելու համար: Հաճախորդը նաև հայտարարում է, որ սույն Պայմանագիրը կազմում է Հաճախորդի վավեր և իրավաբանորեն պարտադիր պարտավորություն, որը կիրառելի է դրա պայմաններին համապատասխան: Հաճախորդը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Ընկերությանը սույն Պայմանագիրը ստորագրող անձի լիազորությունների ցանկացած փոփոխության մասին:

   The Client represents and warrants that the individual executing this Agreement on its behalf is duly authorized, empowered, and has all necessary corporate or organizational approvals to enter into this Agreement and to bind the Client legally. The Client further represents that this Agreement constitutes a valid and legally binding obligation of the Client, enforceable in accordance with its terms. The Client undertakes to notify the Company immediately of any changes to the authority of the individual signing this Agreement.

2. Ծանոթացել և միանում է Բրոքերային հաշվի բացման սույն Պայմանագրին, դրա անբաժանելի մասը կազմող Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններին Ընկերության պաշտոնական կայքէջում տեղադրված (https://inviabroker.com) սակագներին և պայմաններին (այսուհետ նշված պայմանները և սակագները միասին՝

«Պայմաններ»), հայտարարագրերին, տեղեկացումներին, զգուշացումներին ինչպես նաեւ Ընկերության ռիսկերի հայտարարագրին, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկություններին, Հաճախորդի հաշիվներն էլեկտրոնային եղանակով և էլեկտրոնային ստորագրության օգտագործման և էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման համար» բացման և վարման կարգը կարգավորող կանոններին: Սույնով հայտնում է, որ, վերջիններիս բովանդակությունը ինձ լիարժեք հասկանալի է, չկա լրացուցիչ պարզաբանելու/բացատրելու անհրաժեշտություն, լիարժեք գիտակցում ու անվերապահորեն հաստատում է Պայմանագրի բովանդակությունն ու Պայմանները՝ վերահաստատելով Պայմաններով սահմանված Ընկերության համաձայնությունները, երաշխիքները եւ հավաստիացումները և համաձայն Պայմանների Ընկերության հետ ձևավորում է պայմանագրային հարաբերություններ:

The Client has familiarized themselves with and joins the Agreement for opening a Brokerage Account, including the provisions of the Brokerage (Dealer) Regulations, the tariffs and conditions published on the Company’s official website (https://inviabroker.com) (hereinafter collectively, the “Terms and Conditions”), as well as the declarations, notifications, warnings, the Company’s risk disclosure, and the information established by the Central Bank of the Republic of Armenia Regulation 4/07 regarding the rules for opening and maintaining Client accounts electronically, using electronic signatures, and exchanging electronic documents. The Client confirms that the content of these documents is fully understood, requires no further clarification or explanation, and fully and unconditionally confirms the Agreement and the Terms and Conditions, reaffirming all agreements, guarantees, and assurances set forth therein, thereby establishing a contractual relationship with the Company

3. Ծանոթացել և միանում է Ընկերության կայքում տեղադրված Արժեթղթերի հաշվի բացման (պահառության ծառայությունների մատուցման) պայմանագրին (այսուհետ՝ «Դեպո պայմանագիր») և դրա անբաժանելի մասը կազմող Պայմանագրի պայմանները կարգավորող Պահառուական ծառայությունների մատուցման կանոններին (այսուհետ՝ «Դեպո կանոններ») և սակագներին, անվերապահորեն հաստատում եմ այդ պայմանագրի բովանդակությունն ու պայմանները՝ վերահաստատելով Դեպո պայմաններով ներկայացված իմ համաձայնությունները, երաշխիքները և հավաստիացումները և համաձայն Դեպո Պայմանագրի և Դեպո կանոնների Ընկերության հետ ձևավորում եմ պայմանագրային հարաբերություններ:

The Client has familiarized themselves with and agrees to the Securities Account Opening (Custody Services Provision) Agreement published on the website https://inviabroker.com/account-opening/ (hereinafter referred to as the “Custodial Agreement”) and the Custody Service Tariffs regulating the terms of that Agreement (hereinafter referred to as the “Custody Terms”), which form an integral part of it. The Client

unconditionally confirms the content and conditions of the Custodial Agreement, reaffirming all agreements, guarantees, and assurances set forth in the Custody Terms, and thereby establishes a contractual relationship with the Company in accordance with the Custodial Agreement and the Custody Terms.

4. Պայմանագրում արտացոլված տեղեկատվությունը լիարժեք է և ամբողջությամբ համապատասխանում է իրականությանը:

   The information reflected in the Agreement is complete and fully corresponds to reality.

5. Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Ընկերությունը կարող է օգտագործել իր մոտ համապատասխան հաշիվներում հաշվառվող և Հաճախորդին պատկանող արժեթղթերը և/կամ դրամական միջոցները ի շահ իրեն՝ ՀՀ Կենտրոնական բանկի 4/12 Կանոնակարգի պայմանների պահպանմամբ: Վերջիններս ենթակա են վերադարձման նրա կողմից ներկայացված պահանջի դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

   The Client hereby gives consent for the Company to use the securities and/or financial means held in its accounts that belong to the Client for its own benefit, in accordance with the guidelines set forth in Regulation 4/12 of the Central Bank of the Republic of Armenia. These assets will be returned upon the Client’s request within the terms prescribed by the legislation of the Republic of Armenia.

6. Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Ընկերությունը կարող է իր մոտ համապատասխան հաշիվներում հաշվառվող Ընկերությանը պատկանող արժեթղթերով կնքել ռեպո գործարքներ, ինչպես նաև գրավադրել դրանք համաձայն Պայմանների:

   The Client hereby gives consent for the Company to enter into repo transactions with the securities owned by the Client and recorded in the relevant accounts with the Company, as well as to pledge such securities, provided that this is done in compliance with the Rules and without breaching its fiduciary duties towards the Client.

7. Սույնով Հաճախորդը տալիս է իր, որ ծանոթացել է Բրոքերային (դիլերային) գործունեության կանոնների անբաժանելի մաս հանդիսացող բոլոր Հավելվածների բովանդակությանը և միանում է դրանց: Սույնով անձը հայտնում եմ որ, վերջիններիս բովանդակությունը լիարժեք հասկանալի է, չկա լրացուցիչ պարզաբանելու/բացատրելու անհրաժեշտություն:

   The Client has familiarized themselves with and agrees to the contents of all appendices that form an integral part of the Rules of Brokerage (Dealer) Activity and joins them. The Client

confirms that the contents of these documents are fully understood and require no further clarification or explanation.

8. Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ երկրների օրենսդրությամբ, Ընկերության Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային պատժամիջոցների պահպանման դեմ պայքարի ընթացակարգի, Պատժամիջոցների պահպանման քաղաքականության, ինչպես նաև Ընկերության այլ ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում, իր հայեցողությամբ, կարող է դադարեցնել Ընկերության հետ պայմանագրային հարաբերությունները, արգելափակել Ընկերության բրոքերային հաշիվը և/կամ սառեցնել ակտիվները:

The Client hereby gives consent that, in cases prescribed by the legislation of the Republic of Armenia or other jurisdictions, as well as in accordance with the Company's procedures for combating money laundering, terrorist financing, and international sanctions compliance, its Sanctions Compliance Policy, and other internal legal acts, the Company may, at its sole discretion, terminate its contractual relationship with the Client, block the Client's brokerage account, and/or freeze the Client's assets.

9. Սույնով Հաճախորդը հաստատում է, որ Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում գործարք կնքելու նպատակով օգտագործվող իմ արժեթղթերը եւ/կամ դրամական միջոցները ստացվել են օրինական ճանապարհով, ծանրաբեռնված չեն երրորդ անձանց իրավունքներով, չեն ստացվել հանցավոր գործունեության արդյունքում, ներառյալ, սակայն չսահմանափակվելով փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու եւ այլ: Միաժամանակ, տալիս եմ իմ համաձայնությունը՝ Ընկերության կողմից իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք անհրաժեշտ են համարվում համաձայն ահաբեկչության ֆինանսավորման եւ փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրական կարգավորումների և Ընկերության ներքին իրավական ակտերի: Ընկերությունը հաշվի բացումն արգելող հիմքերի բացակայության դեպքում միայն պետք է բացի/ակտիվացնի նշված հաշիվ(ներ)ը և օգտահաշիվը:

The Client confirms that the securities and/or financial means used by the Company in executing transactions under the Agreement have been obtained legally, are free from any third-party claims, and have not been acquired through illegal means, including but not limited to activities such as money laundering, terrorist financing, drug trafficking, human trafficking, tax evasion, or other similar activities. The Client hereby consents to the Company conducting any necessary measures required by legislative regulations to combat money laundering and terrorist financing, as well as in accordance with the Company's internal policies. The

Company will proceed with the opening and/or activation of the relevant account(s) and user account only if no grounds exist that would prohibit their establishment.

10. Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի ՀՀ հարկային օրենսգրքի գլուխ 80.2-ով սահմանված դեպքերում և կարգով Ընկերության և Ընկերության հաշիվների վերաբերյալ Ընկերության կողմից տեղեկություններ տրամադրվեն ՀՀ հարկային մարմնին: Միաժամանակ պարտավորվում եմ տրամադրել Ընկերության հարկային ռեզիդենտության վերաբերյալ ամբողջական, ճշգրիտ և հավաստի տեղեկություններ, ինչպես նաև տեղեկությունների փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել Ընկերությանը: Պայմանագրի ստորագրմամբ տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգների օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտով սահմանված դեպքերում և կարգով Ընկերության հաշիվների վերաբերյալ Ընկերության կողմից տեղեկություններ տրամադրվեն ԱՄՆ ներքին եկամուտների ծառայությանը:

    The Client confirms their consent for the Company to provide information about the Client and the Client’s accounts to the tax authorities of the Republic of Armenia, in the cases and manner prescribed by Chapter 80.2 of the Tax Code of the Republic of Armenia. The Client undertakes to provide complete, accurate, and reliable information about their tax residency and to notify the Company of any changes to such information. By signing this Agreement, the Client also confirms their consent for the Company to provide information about the Client and the Client’s accounts to the U.S. Internal Revenue Service (IRS) in the cases and manner prescribed by the Foreign Account Tax Compliance Act (FATCA) of the United States of America.

11. Այն դեպքում, երբ Հաճախորդը նախընտրում է ունենալ սույն Պայմանագրի ստորագրված պատճենը, ապա Հաճախորդը կարող է դրանք տպել, ստորագրել երկու օրինակից և ուղարկել Ընկերությանը՝ նշելով իր փոստային հասցեն: Պայմանագրի պատշաճ ստորագրված և Ընկերության կողմից կնիքով վավերացված երկրորդ օրինակը կուղարկվի Հաճախորդի կողմից նշված փոստային հասցեին:

    If the client prefers to have a signed copy of this Agreement, the client can print them out, sign them in two copies and send them to the company, specifying his postal address. The second copy of the contract, duly signed and stamped by the company, will be sent to the postal address specified by the client.

12. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, տարընթերցումների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:
    This Agreement is drawn up in Armenian and English languages. In the event of any discrepancies or inconsistencies between the two versions, the Armenian version shall prevail.

Հաճախորդ
Client

| | |
|---|---|
| Տնօրենի անուն, ազգանուն<br>Directors name, surname | Ստորագրություն<br>Signature |

Ամսաթիվ
Date

Հավելված 15 Բրոքերային (դիլերային) կանոնների
Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
19/06/2025թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր
ժողովի կողմից
Ուժի մեջ է 14/07/2025թ-ից

INVIA INVESTMENTS

# ORDER FOR MONEY TRANSFER

| | |
|---|---|
| Date | |
| Order № | |
| Order time (MM/HH/DD/MM/YY) | |

| Transferor | | |
|---|---|---|
| Name, surname (Name) | | |
| Account number/Brokerage agreement number | | |
| Portfolio number from which the funds were transferred | | |
| Portfolio number to which the funds were transferred | | |
| Amount | | |
| Currency | | |
| Authorized representative (if any) | | |
| Power of Attorney N | | |
| Name, Surname, Father's name/Name | | |
| Personal identification document (type, number, serial number (serial number if any)/Number of the document certifying state registration or number, serial number of state registration (if any) | | |

| THE CUSTOMER | I hereby confirm that prior to signing this order I have readand understood the Company’s order execution policy andagree to be treated according to the said policy | ORDER ACCEPTED BY<br><br>(DATE ACCEPTED) |
|---|---|---|
| (SIGNATURE) | | (NAME, SURNAME, SIGNATURE OF INVIA EMPLOYEE) |